

**«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ****1. Ընդհանուր դրույթներ**

- 1.1. Սույն կանոնները (այսուհետ նաև՝ **«Կանոններ»**) սահմանում են «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ կողմից ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման, այդ ծառայությունների մատուցման շրջանակներում Հաճախորդի հետ տեղեկատվության փոխանակման և փաստաթղթաշրջանառության, այդ ծառայությունների առնչությամբ գրանցումների վարման կարգը և հանդիսանում են Ընկերության և Հաճախորդի միջև կնքվող Ներդրումային և/կամ ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագրի բաղկացուցիչ մասը:
- 1.2. Կանոններում օգտագործվող հասկացություններն ունեն Կանոնների 2-րդ կետում սահմանված նշանակությունները: Կանոնների 2-րդ կետում սահմանված չլինելու դեպքում այդ հասկացություններին տրվում են ՀՀ օրենսդրությամբ և/կամ միջազգային գործարար սովորույթներով ընդունված նշանակությունները, եթե համատեքստից ակնհայտորեն այլ բան չի բխում:

2. Հասկացություններ

- 2.1. Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.
- «Աձանցյալ ֆինանսական գործիք».** համաձայն Օրենքում կիրառվող նշանակության,
 - «Անվանատիրոջ հաշիվ».** պահառուի անունով բացված Արժեթղթերի հաշիվ, որում հաշվառվում են սեփականության իրավունքով պահառուի հաճախորդներին պատկանող Արժեթղթերը,
 - «Արժեթղթերի հաշիվ».** էլեկտրոնային գրառումների ամբողջություն հաշվետիրոջ, հաշվետիրոջ հաշվում հաշվառվող Արժեթղթերի, այդ Արժեթղթերի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների, Արժեթղթերի՝ հաշվառման ընդունման և գրառումների կատարման ժամկետների և օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկությունների վերաբերյալ,
 - «Արժեթուղթ».** ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և Օրենքով սահմանված՝ Արժեթղթերի վավերապայմաններին բավարարող գործիք,
 - «Արժույթ».** ՀՀ դրամ և/կամ Արտարժույթ,
 - «Արտարժույթ».** օտարերկրյա արժույթ՝ համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքում կիրառվող նշանակության,
 - «Բրոքերային գործառնություն».** Հաճախորդի Պատվերի հիման վրա Ընկերության կողմից իր անունից և Հաճախորդի հաշվին Արժեթղթերի (Աձանցյալ ֆինանսական գործիքների, Արտարժույթի) ձեռքբերում և/կամ

վաճառք կամ Հաճախորդի համապատասխան Պատվերի ընդունում և փոխանցում այլ անձի (բրոքեր, ենթաբրոքեր) կատարմանը,
«Բրոքերային ծառայություններ». Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հետևյալ Ներդրումային և 26-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված հետևյալ ոչ հիմնական ծառայություններից մեկը կամ մի քանիսը.

- 1) Հաճախորդներից Արժեթղթերով և/կամ Ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների կատարման համար Պատվերների ստացում և հաղորդում,
- 2) Հաճախորդի հաշվին և Ընկերության անունից Արժեթղթերով և/կամ Ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների կնքում,
- 3) Հաճախորդի հաշվին և նրա անունից Արժեթղթերով և/կամ Ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների կնքում,
- 4) Հաճախորդի հաշվին Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների իրականացում:

«Գործադիր տնօրեն». Ընկերության կառավարման միանձնյա մարմին, որը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է Ընկերության գործունեության ընթացիկ ղեկավարումը,

«Գործարքի կնքման վայր». Ֆոնդային բորսաներ, այլ կարգավորվող, ինչպես նաև չկարգավորվող շուկաներ, որոնցում կնքվում են Արժեթղթերով, Ածանցյալ ֆինանսական գործիքներով և/կամ Արտարժույթով գործարքներ,

«Գործընկեր». Ընկերության հետ համագործակցող դեպոզիտարիաներ, այլ պահառուներ, բրոքերներ, փաթեթի կառավարիչներ, ինչպես նաև այլ մասնագիտական ծառայություններ մատուցող անձինք, որոնց Ընկերությունը կարող է ներգրավել Հաճախորդին սույն կանոններով սահմանված ծառայությունների մատուցմանը,

«Դիմում». Ընկերության հաստատած ձևով Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող՝ Պայմանագրի պայմաններն ընդունելու դիմում (ներառյալ՝ դրա բոլոր փոփոխությունները և լրացումները),

«Դրամական հաշիվ». Ընկերության մոտ Հաճախորդի անունով բացվող հատուկ դրամական հաշիվ, որում հաշվառվում են Հաճախորդի՝ ծառայությունների մատուցման շրջանակներում օգտագործվող դրամական միջոցները: Դրամական հաշիվը չի հանդիսանում Բանկային հաշիվ ՀՀ օրենսդրության իմաստով,

«Ընկերություն». «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ,

«Իմաստայից հենանիշ». Ֆինանսական շուկաներում լայնորեն ընդունված և կիրառվող ցուցանիշ (օրինակ՝ բորսայական կամ այլ ինդեքս), որը սույն կանոնների և Փաթեթի կառավարման շրջանակներում

կազմվող ներդրումային հայտարարագրի հիման վրա օգտագործվում է Փաթեթի կառավարման արդյունավետությունը գնահատելու համար, **«Կանոնակարգ 33»**, ԿԲ «Արժեթղթերի պահառության գործունեությունը» կանոնակարգ 33, **«Կանոնակարգ 4/06»**, ԿԲ «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06, **«Կանոնակարգ 4/07»**, ԿԲ «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07, **«ԿԲ»**, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, **«Հաճախորդ»**, անձ, որն Ընկերության հետ կնքել է կամ ցանկանում է կնքել Պայմանագիր, **«Հաճախորդի միջոցների տիրապետում»**, Ընկերության կողմից Հաճախորդի միջոցների (Արժեթղթեր և/կամ դրամական միջոցներ) պահում կամ իր հաշվում հաշվառում կամ դրանք փաստացի տիրապետելու այլ հնարավորություն, **«Հաճախորդների հաշվարկային հաշիվ»**, Ընկերության կողմից առևտրային բանկում բացված դրամական հաշիվ, որում հաշվառվում են Հաճախորդներին պատկանող և ծառայությունների շրջանակներում օգտագործման (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ Արժեթղթերով և/կամ Ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների կնքման) նպատակով Ընկերության տիրապետմանը փոխանցված դրամական միջոցները, **«Հաշվետվություններ»**, համաձայն Կանոնակարգ 4/07-ում կիրառվող նշանակության, **«ՀՀ դրամ»**, ՀՀ օրինական վճարման միջոցը, **«Ղեկավար»**, Ընկերության այն պաշտոնատար անձինք, որոնք ընդգրկվում են Օրենքով սահմանված՝ «ներդրումային ընկերության ղեկավար» բնորոշման շրջանակներում, **«Ներդրումային խորհրդատվություն»**, Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ծառայություն՝ Հաճախորդին ուղղված անհատական բնույթի խորհրդատվություն, առաջարկություն կամ նմանատիպ բնույթի այլ գործողություն կամ ծառայություն՝ կապված Արժեթղթերով կամ Ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների կնքման հետ, որը ներառում է հետևյալ ծառայություններից մեկը կամ մի քանիսը.

- 1) խորհրդատվության տրամադրում որևէ Արժեթղթի կամ Ածանցյալ ֆինանսական գործիքի գնման, վաճառքի, բաժանորդագրման, մարման, պահելու, երաշխավորելու կամ այլ գործարքի վերաբերյալ,

- 2) խորհրդատվության տրամադրում կոնկրետ Արժեթղթից կամ Ածանցյալ ֆինանսական գործիքից բխող որևէ իրավունքի իրականացման կամ չիրականացման վերաբերյալ, որը կապված է Արժեթղթի գնման, վաճառքի, բաժանորդագրման, մարման, պահելու, երաշխավորելու կամ այլ գործարքի հետ,
- 3) կրթում, վերապատրաստում, ուսուցում, դասընթացների կազմակերպում և/կամ վարում և վերլուծությունների ու այլ տեղեկությունների տրամադրում Արժեթղթերով գործարքների վերաբերյալ, ինչպես նաև տվյալ գործարքների կնքման նպատակով ստեղծված օնլայն առևտրային հարթակների (Էլեկտրոնային հաղորդակցման համակարգերի, տերմինալների և այլ ծրագրերի) վերաբերյալ տեղեկությունների տրամադրում,

«Ներդրումային հաշիվ». Ընկերության Կողմից միևնույն Հաճախորդի համար բացված և միևնույն վավերապայմաններով միավորված Արժեթղթերի և Դրամական հաշիվներ: Ներդրումային հաշիվը կարող է լինել 2 (երկու) տեսակի՝ սեփական, որը ներառում է սեփական Արժեթղթերի և դրամական հաշիվներ, և որում հաշվառվում են Հաճախորդի սեփական միջոցները, և Հաճախորդների, որը ներառում է Անվանատիրոջ և Հաճախորդների դրամական հաշիվներ, և որում հաշվառվում են Հաճախորդի հաճախորդներին պատկանող միջոցները, **«Ներդրումային ծառայություններ».** Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ծառայություններ,

«Շահերի բախման կանխարգելման և հաղթահարման քաղաքականություն». սույն կանոնների 10-րդ գլխով սահմանված քաղաքականություն,

«Շուկա ստեղծողի ծառայություններ». Արժեթղթերի իրացվելիությունն ապահովելու նպատակով Ընկերության կողմից ՀՖԲ կամ այլ կարգավորվող շուկայի կանոններով սահմանված կարգով այդ Արժեթղթերի շարունակական երկկողմանի գնանշումների կատարում և իր հաշվին ու իր անունից դրանցով գործարքների կնքում,

«Ոչ հիմնական ծառայություններ». Օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված ծառայություններ,

«Ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ». Հաճախորդ, որը չի բավարարում Պրոֆեսիոնալ հաճախորդների համար օրենսդրությամբ նախատեսված չափանիշներին և/կամ սույն կանոններով սահմանված կարգով Ընկերության կողմից չի դասակարգվել որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ, **«Չերաշխավորված տեղաբաշխում».** Տեղաբաշխման տեսակ, որի դեպքում Ընկերությունը ձեռնարկում է իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերն Արժեթղթերն ամբողջ ծավալով տեղաբաշխելու համար, սակայն չի պարտավորվում Արժեթղթերի թողարկման ամբողջական

չտեղաբաշխման դեպքում անձամբ սեփականության իրավունքով ձեռք բերել տվյալ թողարկման չտեղաբաշխված մասը,

«Պահառություն». Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ծառայություն, որը ենթադրում է Արժեթղթերի հաշիվների բացում, դրանցում գրառումների (գործառնությունների) կատարում,

«Պայմանագիր». Ընկերության և Հաճախորդի միջև Ընկերության սահմանած ձևով կնքվող՝ Ներդրումային և Ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագիր,

«Պատվեր». Ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման շրջանակներում Հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող՝ որևէ գործողություն կատարելու (ներառյալ՝ գործարք կնքելու) հանձնարարական,

«Պատվերների կատարման քաղաքականություն». սույն կանոնների 11-րդ գլխով սահմանված քաղաքականություն,

«Պրոֆեսիոնալ հաճախորդ». 1) ներդրումային ընկերությունները, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաձյուղերը, բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային, կենսաթոշակային ֆոնդերը և ներդրումային ֆոնդի կառավարիչները, ինչպես նաև օտարերկրյա պետությունում գրանցված այն իրավաբանական անձինք, որոնք, տվյալ պետության օրենսդրության համաձայն, իրավունք ունեն իրականացնելու սույն ենթակետով սահմանված որևէ անձի գործունեություն.

2) Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության համայնքները, Կենտրոնական բանկը, օտարերկրյա պետությունները, օտարերկրյա պետությունների տեղական ինքնակառավարման մարմինները, օտարերկրյա պետությունների կենտրոնական բանկերը.

3) միջազգային ֆինանսական կազմակերպությունները, այդ թվում՝ Արժույթի միջազգային հիմնադրամը, Եվրոպական կենտրոնական բանկը, Եվրոպական ներդրումային բանկը.

4) իրավաբանական անձինք, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.

ա. ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքմանը նախորդող տարվա վերջի դրությամբ անձի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 500 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,

բ. ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքմանը նախորդող տարվա գործունեությունից ստացված անձի իրացման շրջանառությունը (համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի) գերազանցում է մեկ միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամը,

գ. ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման պահին նախորդող ամսվա վերջի դրությամբ (հայտնի չլինելու դեպքում վերջին ամսվան նախորդող ամսվա դրությամբ) անձի ընդհանուր կապիտալը կազմում է 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը: Դիմումում նշում պարունակվելու դեպքում Ընկերության կողմից Պրոֆեսիոնալ հաճախորդ կարող են դասակարգվել նաև այն անձինք, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.

- 1) դիմումի ներկայացմանը նախորդող 4 եռամսյակների ընթացքում արժեթղթերի շուկայում իրականացրել են 10 և ավելի գործարք միջին եռամսյակային կտրվածքով, ընդ որում՝ մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է առնվազն մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ,
- 2) անձի Արժեթղթերի փաթեթի մեծությունը դիմումի ներկայացման պահին գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,
- 3) ֆինանսական շուկայում ունեն առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որը պահանջում է այն ծառայությունների հետ կապված գիտելիքներ, որոնց հետ կապված անձը նախաձեռնում է դասակարգվել որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ:

«Սակագներ». Ընկերության կողմից սահմանված և նրա պաշտոնական կայքում հրապարակվող՝ Ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման սակագներ կամ, սույն կանոններում նախատեսված դեպքերում, Ընկերության և Հաճախորդի երկկողմանի համաձայնությամբ որոշվող սակագներ,

«Տեղաբաշխում». Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ծառայություն, որը ենթադրում է սույն կանոններով սահմանված կարգով Արժեթղթերի՝ ներդրողներին առաջին վաճառքի կազմակերպում և իրականացում,

«Տեղեկանք». բոլոր ծառայությունների կամ առանձին ծառայության շրջանակներում Հաճախորդի պահանջով Ընկերության կողմից նրան տրամադրվող՝ նրա Արժեթղթերի և/կամ Դրամական հաշվին վերաբերող՝ նրա կողմից պահանջված տեղեկությունները պարունակող փաստաթուղթ,

«Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ». Պայմանագրում (դրանց կից ստորագրվող առանձին փաստաթղթում, որի ձևը ներկայացված է Կանոնների հավելված 10-ում) սահմանված՝ Ընկերության և Հաճախորդի իրավասու հասցեները, էլեկտրոնային փոստի հասցեները և հեռախոսահամարները, որոնց օգտագործմամբ

տեղեկատվության փոխանակումը Պայմանագրի իմաստով ընդունվում է որպես անվտանգ և հուսալի հաղորդակցություն,

«Փաթեթի կառավարում». Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված ծառայություն, մասնավորապես՝ Ընկերության տիրապետմանը հանձնված՝ Հաճախորդին պատկանող և նրա օգտին կամ նրա կողմից նշված երրորդ անձանց օգտին Ընկերության անունից Արժեթղթերի, Արժեթղթերում ներդրում կատարելու համար դրամական միջոցների, Փաթեթի կառավարման շրջանակներում ձեռք բերված (ստացված) Արժեթղթերի և դրամական միջոցների՝ Հաճախորդի ցուցումներին համապատասխան կառավարում,

«ՓԼԱՏ». Փողերի լվացում և ահաբեկչության ֆինանսավորում,

«Քաղվածք». Հաճախորդի պահանջի հիման վրա կամ Պայմանագրում սահմանված պարբերականությամբ Ընկերության կողմից Հաճախորդին տրամադրվող՝ որոշակի պահի դրությամբ նրա հաշվում հաշվառված Արժեթղթերի և/կամ դրամական միջոցների, ինչպես նաև որոշակի ժամանակահատվածում նրա հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ փաստաթուղթ,

«Օրենք». «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք,

«Տիրուցիար պարտականություն». Ընկերության պարտականությունը՝ Ներդրումային և Ոչ հիմնական ծառայությունները մատուցել պատշաճ մասնագիտական մակարդակով, ճշգրտությամբ և ուշադրությամբ՝ գործելով բարեխղճորեն, ի շահ Հաճախորդի:

3. Պայմանագրի պայմաններն ընդունելու կարգը

- 3.1. Պայմանագրի պայմաններն ընդունելու համար Հաճախորդը ներկայացնում է Դիմում, որում նշում է այն ծառայությունները, որոնցից ցանկանում է օգտվել:
- 3.2. Դիմումի և Հաճախորդի ուսումնասիրման արդյունքներով Ընկերությունը բավարարում կամ մերժում է Դիմումը, ինչի մասին Հաճախորդը տեղեկացվում է Հավելված 7-ում նշված ձևով:
- 3.3. Դիմումը բավարարվելու դեպքում Պայմանագիրը կնքված է համարվում Հաճախորդին Դիմումի բավարարման մասին ծանուցման (Հավելված 7) մեջ նշված օրը՝ Դիմումում նշված ծառայությունների շրջանակներում և այլ էական պայմաններով: Ի հավաստումն Պայմանագրի կնքման՝ Կողմերը ստորագրում են երկկողմանի փաստաթուղթ՝ Հավելված 9-ում սահմանված ձևով:
- 3.4. Դիմումի մերժման դեպքում Ընկերությունը Հաճախորդին ներկայացնում է Դիմումի մերժման ծանուցում (Հավելված 7): Ընկերությունը մերժման

- պատճառները բացահայտելու/մերժումը հիմնավորելու պարտավորություն չունի:
- 3.5. Պայմանագրի փոփոխման (ծառայությունների ավելացման/որոշակի ծառայություններից հրաժարման) նպատակով Հաճախորդը ներկայացնում է Պայմանագրի փոփոխման (Հավելված 8), իսկ նոր հաշիվ բացելու նպատակով՝ նոր հաշվի բացման դիմում (Հավելված 2): Ընկերության կողմից Պայմանագրի փոփոխման դիմումի բավարարումը (Պայմանագրի փոփոխությունը) տեղի է ունենում սույն գլխով սահմանված կարգով: Պայմանագրի փոփոխման/նոր հաշվի բացման դիմումի բավարարման/մերժման ծանուցումը Հաճախորդին ուղարկվում է Հավելված 7-ով սահմանված ձևով:

4. Հաճախորդներից պահանջվող տեղեկատվությունը և Հաճախորդների դասակարգման կարգը

- 4.1. Մինչև Պայմանագրի կնքումը (Դիմումի հաստատումը) Ընկերությունը սույն գլխով սահմանված կարգով գնահատում է Հաճախորդի ֆինանսական վիճակը, ներդրումային գործունեության նպատակները, ներդրումային գիտելիքներն ու փորձը և նրան դասակարգում որպես Պրոֆեսիոնալ կամ Ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ:
- 4.2. Սույն գլխով սահմանված կարգով որպես Պրոֆեսիոնալ կամ Ոչ պրոֆեսիոնալ Հաճախորդ դասակարգվելու համար Հաճախորդն Ընկերությանը տրամադրում է տեղեկատվություն իր ներդրումային գիտելիքների և փորձի մասին՝ լրացնելով Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված՝ «Ճանաչիր քո հաճախորդին» հարցաշարը: Հաճախորդը դասակարգվում է որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ Դիմումում համապատասխան նշում պարունակվելու և Պրոֆեսիոնալ հաճախորդի չափանիշներին բավարարելու դեպքում: Դասակարգման արդյունքներն ամփոփվում են Հավելված 1-ով սահմանված ձևով:
- 4.3. Եթե Հաճախորդի կողմից տրամադրված կամ այլ կերպ Ընկերությանը հասանելի դարձած տեղեկատվության հիման վրա Ընկերության գնահատականով Հաճախորդն այլևս չի բավարարում այն պայմաններին, որոնց հիման վրա դասակարգվել է որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ, կամ եթե Ընկերությունը պարզում է, որ Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունները եղել են անարժանահավատ, Ընկերությունը դադարեցնում է Հաճախորդի՝ որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգումը, ինչի մասին 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Հաճախորդին և փոխում նրա դասակարգումը:
- 4.4. Հաճախորդի կողմից Կանոնակարգ 4/06-ով սահմանված ձևով ԿԲ-ին ուղղված՝ որպես Որակավորված ներդրող գրանցվելու դիմում ներկայացվելու դեպքում Ընկերությունն այն Կանոնակարգ 4/06-ով

- սահմանված կարգով ներկայացնում է ԿԲ: Հաճախորդի՝ իրեն Որակավորված ներդրողների տեղեկատվական բազայից հանելու ցանկության առկայության դեպքում Ընկերությունը սույն կետով սահմանված կարգով միջնորդում է համապատասխան դիմումի ներկայացումը ԿԲ:
- 4.5. Պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում Ընկերությունը և Հաճախորդը կարող են նախաձեռնել Հաճախորդի դասակարգման փոփոխություն (ինչպես նաև որպես Որակավորված ներդրող գրանցում կամ գրանցումից հանում), եթե համարում են, որ որոշակի հանգամանքների ուժով Հաճախորդի՝ տվյալ պահի դրությամբ և/կամ տվյալ գործարքի/գործիքի առնչությամբ գիտելիքներն ու փորձը չեն համապատասխանում նախկինում իրականացված դասակարգման հիմքում դրված չափանիշներին:
- 4.6. Սույն կանոնների 4.5. կետում նկարագրված դեպքերում Ոչ պրոֆեսիոնալ հաճախորդի դասակարգման փոփոխությունը Պրոֆեսիոնալ հաճախորդի կատարվում է սույն գլխով սահմանված կարգով նոր գնահատման արդյունքներով:
- 4.7. Օրենքով և դրա հիման վրա ընդունված՝ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում Հաճախորդի գրանցումը որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ և/կամ Որակավորված ներդրող կարող է տեղի ունենալ առանց սույն գլխով սահմանված դասակարգման գործընթացի:

5. Ծառայությունների մատուցման կարգը

5.1. Ընդհանուր պայմաններ

- 5.1.1. Ընկերությունը Ներդրումային և Ոչ հիմնական ծառայությունները մատուցում է ՀՀ օրենսդրությանը, Պայմանագրին և Կանոններին համապատասխան՝ իրականացնելով Հաճախորդի հանդեպ իր Ֆիդուցիար պարտականությունը:
- 5.1.2. Ընկերությունը Ներդրումային և Ոչ հիմնական ծառայությունների մատուցման ընթացքում խստիվ պահպանում է Շահերի բախման կանխարգելման և հաղթահարման քաղաքականության պահանջները:
- 5.1.3. Պատվերները ներկայացվում են Պայմանագրով (ներառյալ՝ Կանոններով) սահմանված կարգով և Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված ձևերով:
- 5.1.4. Պատվերները կատարվում են Պատվերների կատարման քաղաքականությամբ սահմանված կարգով:
- 5.1.5. Ընկերությունը վարում է իր կողմից մատուցվող Ներդրումային և Ոչ հիմնական ծառայությունների հետ կապված՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր գրանցումները և Պայմանագրով սահմանված կարգով Հաճախորդին տրամադրում է Հաշվետվություններ:

- 5.1.6. Ընկերությունը չի խոստանում եկամտաբերության որևէ մակարդակ: Հաճախորդի ներդրումների արժեքները կարող են տատանվել՝ հաշվի առնելով շուկայական գործոնները:
- 5.1.7. Ընկերությունն իրավասու է միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը և փակելու Հաճախորդի Ներդրումային հաշիվները, եթե Հաճախորդը Ներդրումային հաշվով վերջին 1 (մեկ) տարում որևէ գործառնություն չի կատարվել, ինչպես նաև Հաճախորդի Ներդրումային հաշիվը բացասական դառնալուց 3 (երեք) ամիս հետո:
- 5.1.8. Ընկերությունն իրավունք ունի միակողմանիորեն և առանց նախապես ծանուցման լուծել Պայմանագիրը և փակել Հաճախորդի Ներդրումային հաշիվները հետևյալ դեպքերում.
- Պայմանագրի գործողության շարունակումը և/կամ Հաճախորդի Ներդրումային հաշիվները չփակելը կարող է հանգեցնել միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների, Եվրոպական Միության և/կամ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, վերադաս պահառուների կողմից կիրառված/սահմանված պատժամիջոցների, սանկցիոն պահանջների խախտման կամ նման պահանջներին անհամապատասխանության:
 - Առկա է Ընկերության ներքին դիտարկումների մարմնի/աշխատակցի եզրակացությունը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենսդրության պահանջների համապատասխան Պայմանագրի լուծման և Հաճախորդի Ներդրումային հաշիվների փակման անհրաժեշտության վերաբերյալ:
- 5.1.9. Հաշիվը կհամարվի «ոչ ակտիվ», եթե այն վեց (6) ամիս և ավել չի օգտագործվել, իսկ վերջին գործարքը կատարվել է վեց (6) ամսից ավելի վաղ, և հաշվում արժեթղթեր չեն պահվում: «Ոչ ակտիվ» կարգավիճակ ունեցող հաշիվների համար գործում են հետևյալ պայմանները.
- Ոչ ակտիվ հաշվի համար չեն պահանջվում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի իրականացում, եթե հաճախորդը հաշվի կրկին ակտիվացման հայտ չի ներկայացնում:
 - Ոչ ակտիվ հաշվի վերաբերյալ հաշվետվությունները ենթակա չեն ավտոմատ կերպով գնեռացման և տրամադրման Հաճախորդներին:
 - Ոչ ակտիվ հաշիվը չի կարող միակողմանիորեն փակվել (պայմանագիրը լուծվել), եթե Ընկերության Գործադիր տնօրենը կամ այլ լիազորված մարմինը համապատասխան որոշում չի կայացրել:
 - Ոչ ակտիվ հաշվով գործողություններ կատարելու համար հաշիվը պետք է կրկին ակտիվացվի, որի նպատակով Հաճախորդից կարող է պահանջվել վճարել Սակագներով սահմանված համապատասխան վճարները, ինչպես

նաև թարմացնել ՓԼԱՖ ընթացակարգերով պահանջվող տվյալները Ընկերության ՓԼԱՖ ընթացակարգերին համապատասխան:

5.2. Ներդրումային հաշիվ

- 5.2.1. Բրոքերային, ներառյալ արտարժույթի առուվաճառքի, Փաթեթի կառավարման և/կամ Պահառության ծառայությունների մատուցումն սկսվում է Հաճախորդի համար Սեփական և/կամ Հաճախորդների Ներդրումային հաշիվ բացվելուց հետո: Հաճախորդների Ներդրումային հաշիվը կարող է լինել ընդհանրական, որում հաշվառվում են Հաճախորդի հաճախորդներին պատկանող Արժեթղթերը/դրամական միջոցները՝, և առանձնացված, որում հաշվառվում են Հաճախորդի մեկ՝ բացահայտվող հաճախորդին պատկանող Արժեթղթերը/դրամական միջոցները: Հաճախորդը բացահայտում է առանձնացված Ներդրումային հաշվի իրական շահառուին՝ ներկայացնելով Ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ձևաթուղթը՝ լրացված և ստորագրված:
- 5.2.2. Հաճախորդի կողմից Ներդրումային հաշվին դրամական միջոցների մուտքագրումը կատարվում է բանկային փոխանցումների միջոցով՝ Հաճախորդի սեփական հաշվից:

6. Ներդրումային ծառայությունների մատուցման ընթացակարգ

6.1. Բրոքերային ծառայություններ

6.1.1. Հաճախորդի հաշվին գործարքների կատարում

- 6.1.1.1. Ընկերությունը Հաճախորդի հաշվին անձամբ՝ իր անունից, Բրոքերային գործառնություններ է կատարում այն կարգավորվող և/կամ չկարգավորվող շուկաներում, որոնց ունի անմիջական հասանելիություն:
- 6.1.1.2. Ընկերությունը կարող է Հաճախորդի Պատվերի հիման վրա Արժեթղթերով և/կամ Ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ կնքել նաև Հաճախորդի հաշվին և նրա անունից այն դեպքերում, երբ, Ընկերության կարծիքով, Հաճախորդի անունից գործարքի կնքումը նրա համար ապահովում է առավել բարենպաստ պայմաններ:
- 6.1.1.3. Ընկերությունը կարող է Հաճախորդի հետ կնքվող առուվաճառքի պայմանագրի հիման վրա նրան վաճառել/նրանից ձեռք բերել Արժեթուղթ, արտարժույթ և/կամ ածանցյալ ֆինանսական գործիքներ եթե այդպիսի գործարքը Հաճախորդի համար ապահովում է առավել բարենպաստ պայմաններ:

6.1.2. Հաճախորդից Պատվերների ստացում և փոխանցում

- 6.1.2.1. Այն դեպքերում, երբ Ընկերությունը չունի անմիջական հասանելիություն այն կարգավորվող և/կամ չկարգավորվող շուկաներին, որոնցում շրջանառվում են Հաճախորդի Պատվերում նշված Արժեթղթերը (Ածանցյալ ֆինանսական գործիքները), նա Հաճախորդի Պատվերները փոխանցում է կատարման այլ բրոքերների (ենթաբրոքերների):

- 6.1.2.2. Բրոքերների (ենթաբրոքերների) ընտրությունը կատարվում է սույն կանոնների 13-րդ գլխում նշված չափանիշների հաշվառմամբ և կարգով:
- 6.1.2.3. Ընկերությունը կարող է Հաճախորդի Պատվերը փոխանցել այլ բրոքերի (ենթաբրոքերի) կատարմանը նաև այն դեպքերում, երբ, չնայած Պատվերն իրեն անմիջականորեն հասանելի շուկաներում կատարելու հնարավորությանը, Ընկերության գնահատմամբ Հաճախորդի լավագույն շահերից բխում է Պատվերի կատարումն այլ բրոքերի (ենթաբրոքերի) պատվիրակելը:
- 6.1.2.4. Կանոնների 6.1.2.3. կետում նշված գնահատումն Ընկերությունն իրականացնում է Պատվերների կատարման քաղաքականությամբ նախատեսված չափանիշների հաշվառմամբ:
- 6.1.2.5. Կանոններով սահմանված դեպքերում և կարգով Հաճախորդի Պատվերն այլ բրոքերի (ենթաբրոքերի) կատարմանը փոխանցելու պահից Ընկերության Ֆիդուցիար պարտականությունը համարվում է կատարված:
- 6.1.3. Գործառնությունների կատարում*
- 6.1.3.1. Բրոքերային գործառնությունները կատարվում են ինչպես կարգավորվող, այնպես էլ չկարգավորվող շուկաներում շրջանառվող Արժեթղթերով, արտարժույթով և Աձանցյալ ֆինանսական գործիքներով:
- 6.1.3.2. Բրոքերային գործառնությունները կատարվում են Հաճախորդի՝ Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված ձևերով կազմված և Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով Ընկերությանը ներկայացված Պատվերների հիման վրա:
- 6.1.3.3. Ընկերությունը կատարում է Պատվերները Կանոնների 11-րդ գլխով սահմանված կարգով և ժամկետներում՝ հաշվի առնելով Կանոնների 10-րդ գլխի կարգավորումները:
- 6.1.3.4. Մինչև Ընկերության կողմից Պատվերի կատարումը Հաճախորդը կարող է չեղարկել կամ փոփոխել այն՝ Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով ներկայացնելով համապատասխան Պատվերներ:
- 6.1.3.5. Հաճախորդի Պատվերը չի կարող կատարվել, եթե նրա Դրամական հաշվի միջոցները բավարարչեն Պատվերի կատարման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հաճախորդին մատուցվում են գործարքների կնքման նպատակով փոխառությունների տրամադրման ծառայություններ, և այդ ծառայությունների շրջանակներում նրան տրամադրվել է փոխառություն:
- 6.1.3.6. Ընկերությունն իրականացնում է Բրոքերային ծառայությունների շրջանակներում Արժեթղթերով, Արտարժույթով, Աձանցյալ ֆինանսական գործիքներով կնքված գործարքների վերջնահաշվարկի համար անհրաժեշտ գործողություններ՝ Հաճախորդի համապատասխան հաշիվներից փոխանցելով և համապատասխան հաշիվներին մուտքագրելով գործարքների կատարման համար պահանջվող և դրանց արդյունքում ստացվող միջոցները:

6.2. Ներդրումային խորհրդատվություն

6.2.1. Անհատական բնույթի խորհրդատվություն

- 6.2.1.1. Անհատական բնույթի խորհրդատվությունը ենթադրում է Հաճախորդին որևէ Արժեթղթի կամ Աձանցյալ ֆինանսական գործիքի գնման, վաճառքի, բաժանորդագրման, մարման, պահելու, երաշխավորելու կամ այլ գործարքի կամ կոնկրետ Արժեթղթից կամ Աձանցյալ ֆինանսական գործիքից բխող որևէ իրավունքի իրականացման կամ չիրականացման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում:
- 6.2.1.2. Անհատական բնույթի խորհրդատվությունը տրամադրվում է Ընկերության պատճառաբանված եզրակացության տեսքով՝ ստորագրված Ընկերության համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող աշխատակցի և Գործադիր տնօրենի կողմից:
- 6.2.1.3. Անհատական բնույթի խորհրդատվություն հայցելու նպատակով Հաճախորդը Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով Ընկերությանը ներկայացնում է համապատասխան դիմում/հարցում:
- 6.2.1.4. Դիմումի/հարցման ուսումնասիրման ընթացքում Ընկերությունը կարող է Հաճախորդից պահանջել հայցվող ծառայության (կոնկրետ դեպքի/Արժեթղթի/Աձանցյալ ֆինանսական գործիքի/գործարքի) վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն, որի հիման վրա հստակեցվում են անհատական խորհրդատվության շրջանակները և տրամադրման ժամկետները:
- 6.2.1.5. Ծառայության մատուցման սկիզբ է համարվում Հաճախորդի կողմից Կանոնների 6.2.1.4. կետում նշված՝ խորհրդատվության շրջանակի և տրամադրման ժամկետների հաստատման պահը:

6.2.2. Ուսումնական բնույթի խորհրդատվություն

- 6.2.2.1. Ուսումնական բնույթի խորհրդատվությունը ներառում է դասընթացների, այլ ֆորմատներով ուսումնառության կազմակերպում, առանձին ուսումնական նյութերի մշակում՝ որոշակի ֆինանսական գործարքների, Արժեթղթերի շուկայի արդի հիմնախնդիրների, առևտրի էլեկտրոնային հարթակների և այլ՝ կապիտալի շուկայի հետ առնչվող թեմաների վերաբերյալ:
- 6.2.2.2. Ուսումնական բնույթի խորհրդատվությունը տրամադրվում է դասընթացների, թրեյնինգների մշակման և անցկացման, ուսումնական ծրագրերի և այլ նյութերի պատրաստման և էլեկտրոնային կրիչներով Հաճախորդին տրամադրման ձևերով:
- 6.2.2.3. Ուսումնական բնույթի խորհրդատվություն (օրինակ՝ սեմինարի անկացում) հայցելու նպատակով Հաճախորդը ներկայացնում է համապատասխան դիմում/հարցում:
- 6.2.2.4. Դիմումի ուսումնասիրումը, դրա պայմանների (ներառյալ՝ ժամկետների) հստակեցումը և Հաճախորդի հետ համաձայնեցումը տեղի են ունենում սույն կանոնների 6.2.1.4.-6.2.1.5. կետերով սահմանված կարգով:

6.3. Փաթեթի կառավարում

6.3.1. Փաթեթի կառավարման ծառայության մատուցման կարգը

- 6.3.1.1. Փաթեթի կառավարման ծառայության մատուցման ընթացքում Ընկերության գործունեությունն ուղղված է սկզբնապես ներդրված միջոցների (սկզբնական փաթեթի) պահպանմանը և առավելագույն ներդրումային եկամտի ապահովմանը՝ հաշվի առնելով մշակված ներդրումային հայտարարագիրը, ներառյալ՝ ընտրված ներդրումային սահմանափակումները և սահմանաչափերը:
- 6.3.1.2. Մինչև Փաթեթի կառավարման ծառայության մատուցման սկիզբը Կողմերը Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով համաձայնեցնում են ներդրումային հայտարարագիրը, այդ թվում՝ սկզբնական փաթեթի կառուցվածքը, կիրառելի սահմանաչափերը, ներդրումային ռազմավարությունը, ռիսկ/եկամուտ հարաբերակցությունը և այլն:
- 6.3.1.3. Փաթեթի կառավարման ծառայությունները մատուցվում են բացառապես Հաճախորդի ՄԵՓԱԿԱՆ հաշվի համար: Սա նշանակում է, որ Հաճախորդը պետք է ունենա լիարժեք սեփականություն այն ակտիվների նկատմամբ, որոնք փոխանցվում են կառավարման պորտֆելի կառավարման մանդատի շրջանակներում, և այդպիսի ծառայությունները չպետք է մատուցվեն ՀԱՃԱԽՈՐԴԻ հաշվի համար (ագրեգացված կամ անվանական հաշիվներ), որոնք միավորում են մի քանի հաճախորդների ակտիվները: Ընկերությունը կառավարելու է այս ակտիվները ներդրումային հայտարարագրում նշված պայմաններին և Հաճախորդի անհատական նախապատվություններին ու նպատակներին համապատասխան:

6.3.2 Փաթեթի կառավարման ծառայությունների տեսակները

- 6.3.2.1. Փաթեթի Հայեցողական կառավարումը վերաբերում է այն ծառայությանը, երբ Փաթեթի կառավարչին տրվում է լիակատար հայեցողություն՝ կառավարելու հաճախորդի ակտիվները: Փաթեթի կառավարիչն ունի լիազորություն կայացնելու բոլոր ներդրումային որոշումները Հաճախորդի անունից՝ առանց յուրաքանչյուր գործարքի նախնական հաստատման անհրաժեշտության, քանի դեռ որոշումները համապատասխանում են համաձայնեցված ներդրումային հայտարարագրին: Փաթեթի կառավարիչը պատասխանատու է ապահովելու, որ Փաթեթը համապատասխանի Հաճախորդի՝ ներդրումային հայտարարագրում ներկայացված նպատակներին, ռիսկի տոլերանտությանը և նախապատվություններին:
- 6.3.2.2. Փաթեթի Կատարողական կառավարումը վերաբերում է այն ծառայությանը, երբ Հաճախորդը պահպանում է բոլոր ներդրումային որոշումների նկատմամբ լիակատար վերահսկողությունը: Փաթեթի կառավարչի դերը խստորեն սահմանափակվում է գործարքների իրականացմամբ՝ համաձայն

Հաճախորդի հրահանգների: Փաթեթի կառավարիչը ներդրումային խորհրդատվություն չի տրամադրում և Հաճախորդի անունից որևէ հայեցողական որոշում չի կայացնում:

6.3.3 Փաթեթի կառավարման ծառայությունների մեկնարկ

6.3.3.1 Փաթեթի կառավարման ծառայության մեկնարկը համարվում է այն պահը, երբ Հաճախորդը, ստորագրելով Ակտիվների փոխանցման ձևը, փոխանցում է միջոցները Փաթեթի կառավարման համար նախատեսված ներդրումային հաշվին:

6.3.4 Հաշվի պահանջներ

6.3.4.1 Առանձին հաշիվ Փաթեթի կառավարման համար. Հաճախորդը պետք է բացի առանձին ներդրումային հաշիվ, որը նախատեսված է Փաթեթի կառավարման համար: Սա ապահովում է, որ Փաթեթի կառավարման գործունեությունը հստակ տարբերակվի Հաճախորդի կողմից իրականացվող ցանկացած ինքնուղղորդվող գործունեությունից: Առանձին հաշիվը դյուրացնում է ճշգրիտ հաշվետվությունների ներկայացումը, համապատասխանությունը և վճարների հետևումը:

6.3.5 Փաթեթի կառավարման լրացուցիչ կանոններ

6.3.5.1 Ընկերությունը Փաթեթի կառավարումն իրականացնում է ինքնուրույն՝ ներդրումային հայտարարագրով սահմանված՝ Հաճախորդի ցուցումներին համապատասխան:

6.3.5.2 Կանոնների 6.3.5.1 ենթակետը չի սահմանափակում Ընկերության իրավունքը՝ ներգրավելու արտաքին կառավարիչների Հաճախորդի Փաթեթի կառավարման գործընթացում: Արտաքին կառավարիչները ընտրվում են սույն Կանոնների 13-րդ գլխում սահմանված չափանիշներին համապատասխան:

6.3.5.3 Լավագույն արդյունքների ապահովման և Փաթեթի կառավարումը հնարավորինս Հաճախորդի պահանջմունքներին համապատասխանեցնելու նպատակով Ընկերությունը կարող է Փաթեթի կառավարման ծառայությունը մատուցել իր հետ փոխկապակցված անձանց կողմից մատուցվող այլ ծառայությունների հետ միասնության մեջ: Սույն կետը ենթադրում է, որ ի հավելումն Արժեթղթերի և/կամ Ածանցյալ Ֆինանսական գործիքների՝ Հաճախորդի փաթեթը կարող է ներառել նաև

այլ՝ Ընկերության հետ փոխկապակցված անձանց կողմից առաջարկվող ֆինանսական կամ այլ գործիքներ՝ միավորված մեկ ընդհանուր ներդրումային քաղաքականությամբ և կառավարման միևնույն սկզբունքներով: Այդ դեպքում սույն կանոնների իմաստով Փաթեթի կառավարման ծառայության մատուցման դրույթները տարածվում են այդպիսի փաթեթի՝ Արժեթղթերից (Աժանցյալ ֆինանսական գործիքներից) բաղկացած մասի վրա:

- 6.3.5.4 Ընկերությունը Հաճախորդի կողմից Փաթեթի կառավարման համար փոխանցված ակտիվների նկատմամբ սեփականության իրավունք ձեռք չի բերում:
- 6.3.5.5 Ընկերությունը Փաթեթում ներառված միջոցներով գործարքներ է կատարում սեփական անունից՝ մասնակցելով կարգավորվող և չկարգավորվող շուկաներում, և անհրաժեշտության դեպքում ներգրավելով դեպոզիտարիաներ, բրոքերներ և այլ միջնորդներ:
- 6.3.5.6 Ընկերությունը չի պարտավորվում Փաթեթի կառավարման ծառայության շրջանակներում ապահովել ներդրումների որևէ երաշխավորված եկամտաբերության տոկոս:
- 6.3.5.7 Հաճախորդը կարող է նախաձեռնել ներդրումային հայտարարագրի փոփոխություններ/լրացումներ՝ տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով տարածելով և համակարգելով համապատասխան տեղեկատվությունը:

6.3.6 Իմաստալից հենանիշի և ներդրումային ռազմավարության ընտրություն

- 6.3.6.1 Ներդրումային հայտարարագրում նշվող իմաստալից հենանիշը պետք է արտահայտի այլընտրանքային ներդրումների եկամտաբերությունը, որը հնարավորություն կտա Հաճախորդին համեմատել Փաթեթի կառավարման արդյունավետությունը այլընտրանքային ներդրումների արդյունավետության հետ: Մասնավորապես, Իմաստալից հենանիշը պետք է արտահայտի ֆինանսական շուկայում առկա համադրելի այլ գործիքների եկամտաբերությունը, որոնց ժամկետայնությունը, ռիսկը, ներդրման երկիրը և այլ էական բնութագրիչները համապատասխանում են, հնարավորինս մոտ կամ համեմատելի են Ներդրումային հայտարարագրում նշված սահմանափակումներին:
- 6.3.6.2 Իմաստալից հենանիշը չի կարող հիմնված լինել Ընկերության՝ անցյալում ցուցաբերած եկամտաբերության կամ Ընկերության ազդեցության ներքո գտնվող գործոնների վրա:

6.4. Չերաշխավորված տեղաբաշխում

- 6.4.1. Չերաշխավորված տեղաբաշխման ծառայությունների շրջանակներում Ընկերությունը Հաճախորդի (թողարկողի) Արժեթղթերի Տեղաբաշխման

- գործընթացի կազմակերպման համար նրան մատուցում է հետևյալ ծառայությունները (կամ դրանց մի մասը).
- 6.4.1.1. Արժեթղթերի ազդագրի (ներդրողների համար նախատեսված այլ փաստաթղթի) մշակում և, անհրաժեշտության դեպքում, ԿԲ-ում դրա գրանցման կազմակերպում,
 - 6.4.1.2. Պոտենցիալ ներդրողների բացահայտման և ներգրավման աշխատանքների իրականացում (անհատական հանդիպումների, road show-ների կազմակերպման միջոցով),
 - 6.4.1.3. Գովազդային և մարքեթինգային միջացառումների իրականացում,
 - 6.4.1.4. Կարգավորվող շուկայում Արժեթղթերի ցուցակման (առևտրին թույլտվության) գործընթացի կազմակերպում,
 - 6.4.1.5. Օրենքով պահանջվող՝ հաշվետու թողարկողների տեղեկատվության բացահայտման գործընթացի կազմակերպում:
 - 6.4.2. Ընկերությունը ներդնում է իր լավագույն ջանքերը թողարկման ամբողջ ծավալի Տեղաբաշխումն ապահովելու ուղղությամբ, սակայն չի երաշխավորում այդպիսի ամբողջական Տեղաբաշխումը:
 - 6.4.3. Տեղաբաշխման շրջանակներում մատուցման ենթակա ծառայությունների շրջանակը և առանձնահատկությունները Ընկերության և Հաճախորդի միջև համաձայնեցվում են Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով՝:

6.5. Շուկա ստեղծողի ծառայություններ

- 6.5.1. Շուկա ստեղծողի ծառայությունների շրջանակներում Ընկերությունը՝ որպես բորսայի (այլ տեսակի կարգավորվող շուկայի) անդամ, Հաճախորդի կամ իր (թողարկողի)՝ կարգավորվող շուկայում ցուցակված (առևտրին թույլատրված) Արժեթղթերի իրացվելիության ապահովման նպատակով մասնակցում է այդ Արժեթղթերով առևտրին՝ կատարելով դրանց շարունակական երկկողմանի (առքի և վաճառքի) գնանշումներ, ինչպես նաև դրանցով կնքելով առուվաճառքի գործարքներ:
- 6.5.2. Շուկա ստեղծողի ծառայությունների մատուցման կարգը և պայմանները (ներառյալ՝ առքի և վաճառքի գնանշումների սպրեդը) սահմանվում են համապատասխան կարգավորվող շուկայի կանոններով:

7. Ոչ հիմնական ծառայությունների մատուցման ընթացակարգ

7.1. Պահառություն

7.1.1. Պահառության ընդհանուր պայմանները

- 7.1.1.1. Արժեթղթերը պահառության հանձնելը չի հանգեցնում Արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցմանն Ընկերությանը:
- 7.1.1.2. Ընկերությունը Արժեթղթերի պահպանման վայրերն ընտրում է ինքնուրույն՝ սույն կանոնների 13-րդ գլխով սահմանված կարգով:

7.1.1.3. Ընկերությունը պահառության ծառայությունները մատուցում է Կանոնակարգ 33-ին համապատասխան՝ Արժեթղթերի կրկնակի՝ ակտիվային և պասիվային հաշիվներում հաշվառման սկզբունքով:

7.1.2. Հաշիվների տեսակները և դրանց բացման կարգը

7.1.2.1. Հաճախորդի Պատվերի և/կամ Դիմումի հիման վրա նրա անունով Ընկերությունում կարող են բացվել ինչպես Արժեթղթերի սեփական, այնպես էլ Անվանատիրոջ (ընդհանրական և առանձնացված) հաշիվներ:

7.1.2.2. Անվանատիրոջ արժեթղթերի հաշիվ բացվում է միայն այն Հաճախորդների համար, որոնք իրենց գրանցման երկրի օրենսդրությանը համապատասխան ունեն Արժեթղթերի պահառության գործունեություն իրականացնելու իրավունք:

7.1.2.3. Անվանատիրոջ առանձնացված հաշիվ բացելու համար Հաճախորդն Ընկերությանը տրամադրում է տեղեկատվություն այդ հաշվում հաշվառման ենթակա Արժեթղթերի սեփականատիրոջ մասին՝ Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում սահմանված ձևով, ինչպես նաև պարտավոր է Ընկերության պահանջով տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն: Անվանատիրոջ ընդհանրական հաշիվ բացած Հաճախորդը պարտավոր է Ընկերության պահանջով նրան տրամադրել ամբողջական և համապարփակ տեղեկատվություն այդ հաշվում հաշվառվող Արժեթղթերի սեփականատերերի և իրական շահառուների մասին:

7.1.2.4. Ընկերության կողմից սահմանված ժամկետում սույն կանոնների 7.1.2.3. կետով սահմանված գործողությունների չկատարումը հիմք է Ընկերության կողմից Անվանատիրոջ հաշվի փակման կամ դրանով որոշակի կամ բոլոր գործառնությունների կատարման կասեցման համար:

7.1.3. Արժեթղթերի փոխանցման գործառնությունների տեսակները և դրանց կատարման առանձնահատկությունները

7.1.3.1. Ընկերությունը Հաճախորդի, ինչպես նաև գործարքի մյուս կողմի Պատվերների հիման վրա իրականացում է «առաքում վճարման դիմաց» և «ազատ առաքում» համաձայնությամբ» տեսակների գործառնություններ:

7.1.3.2. Ընկերությունը Հաճախորդի Պատվերի հիման վրա իրականացնում է նաև «ազատ առաքում» տեսակի գործառնություն: «Ազատ առաքում» տեսակի գործառնության իրականացման համար Հաճախորդն ի հավելումն Պատվերի պետք է ներկայացնի նաև փոխանցման համար հիմք հանդիսացող գործարքը/իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հավաստող փաստաթուղթ (օրինակ՝ համապատասխան պայմանագրի պատճենը), իսկ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ նաև այլ անհրաժեշտ փաստաթղթեր: Ներկայացվող փաստաթղթերի բավարարությունը գործառնության կատարման համար գնահատում է Ընկերությունը. անհրաժեշտության դեպքում Հաճախորդից կարող են

- պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր: Բացառություն է կազմում սույն կանոնների 8.2. կետով նախատեսված դեպքը. այդպիսի փոխանցման կատարման համար հիմնավորող փաստաթղթեր չեն պահանջվում:
- 7.1.3.3. «Առաքում վճարման դիմաց» և «ազատ առաքում՝ համաձայնությամբ» փոխանցման գործառնությունների հանդիպակաց Պատվերներում նշված տվյալները պետք է համապատասխանեն միմյանց: Տվյալների անհամապատասխանության դեպքում գործառնության կատարումը մերժվում է:
- 7.1.3.4. Ընկերությունը փոխանցման գործառնությունները կատարում է պահանջների և պարտավորությունների զուտացման և հաշվանցի միջոցով:
- 7.1.3.5. Փոխանցման Պատվերները ներկայացվում են Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված ձևերով:

7.1.4. Ընկերության կողմից Պահառության հանձնված Արժեթղթերից բխող իրավունքների իրականացում, Հաճախորդին արժեկտրոնների և շահութաբաժինների վճարում

- 7.1.4.1. Պահառության շրջանակներում Ընկերությունն ապահովում է Հաճախորդի կողմից բաժնետոմսերով քվեարկության և Արժեթղթերի հետ կապված այլ իրավունքների իրականացումը կամ ինքն է իրականացնում այդ իրավունքները՝ Հաճախորդից պահանջելով համապատասխան իրավունքի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր (օրինակ՝ լիազորագիր): Իրավունքների իրականացման կառուցակարգի՝ սույն կետում նշվածներից ընտրությունը կատարում է Ընկերությունը:
- 7.1.4.2. Հաճախորդը կրում է սույն կանոնների 7.1.4.1. կետի հիման վրա Ընկերության կողմից պահանջված փաստաթղթերը նրան չտրամադրելու հետ կապված բոլոր բացասական հետևանքները:
- 7.1.4.3. Պահառության շրջանակներում Ընկերությունը Արժեթղթերի թողարկողի կողմից վճարված՝ Արժեթղթերից բխող եկամուտները փոխանցում է Հաճախորդին: Սույն կետում նշված եկամուտները հաշվեգրվում են Հաճախորդի Դրամական հաշվին: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց գործողությունների/անգործության համար, որոնց հետևանքով Արժեթղթերից բխող եկամուտները չեն վճարվում, վճարվում են ոչ լրիվ ծավալով կամ կիրառելի ժամկետների խախտմամբ (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ հարկերի կամ այլ պարտադիր վճարների գանձում, օտարերկրյա դեպոզիտարիաների կողմից վճարումների կատարման սառեցում և այլն):
- 7.1.4.4. Եթե սույն Կանոնների 7.1.4.3. կետում նշված եկամուտները վճարվում են այնպիսի Արտարժույթով, որով հնարավոր չէ դրանք փոխանցել Հաճախորդին, ապա Ընկերությունը դրանք փոխարկում է Հաճախորդի հետ համաձայնեցված այլ արժույթի՝ փոխանցելու օրվա դրությամբ ԿԲ սահմանած փոխարժեքով:

7.1.4.5. Պահառության շրջանակներում Ընկերությունն իրականացնում է Արժեթղթերից բխող իրավունքների իրականացման համար թողարկողի կամ այլ պահառուի (այդ թվում՝ ՀԿԴ-ի, այլ կենտրոնացված դեպոզիտարիայի կամ օտարերկրյա պահառուի) կողմից Հաճախորդին, ինչպես նաև Հաճախորդի կողմից թողարկողին կամ այլ պահառուին տեղեկությունների և փաստաթղթերի փոխանցումը:

7.2. Արժեթղթերի թողարկման և/կամ Տեղաբաշխման հետ կապված ծառայություններ

7.2.1. Արժեթղթերի թողարկման և/կամ Տեղաբաշխման հետ կապված ծառայությունների շրջանակներում Ընկերությունը Հաճախորդին կարող է մատուցել Արժեթղթերի թողարկման և/կամ Տեղաբաշխման հետ կապված խորհրդատվական և այլ՝ սույն կանոնների 6.4.1. կետի իմաստով Տեղաբաշխման ծառայությունների շրջանակներում չընդգրկված ծառայություններ:

7.2.2. Արժեթղթերի թողարկման և/կամ Տեղաբաշխման հետ կապված ծառայությունների շրջանակը, մատուցման պայմանները, ժամկետները կարգը և սակագները Հաճախորդի և Ընկերության միջև համաձայնեցվում են Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով:

7.3. Գործարքների կնքման համար փոխառության տրամադրում

7.3.1. Պատվերում համապատասխան նշում պարունակվելու դեպքում Ընկերությունը կարող է Հաճախորդին փոխառությամբ տրամադրել դրամական միջոցներ և/կամ Արժեթղթեր, եթե որոշակի՝ Պատվերում նշված գործարքի կնքման համար Հաճախորդի Ներդրումային հաշվում նախատեսված միջոցները բավարար չեն, և Ընկերությունը հանդիսանում է տվյալ գործարքի կողմ:

7.3.2. Ընկերությունը չի կրում Հաճախորդին փոխառությամբ դրամական միջոցներ և/կամ Արժեթղթեր տրամադրելու պարտավորություն: Պատվերը կարող է մերժվել Ընկերության մոտ համապատասխան միջոցների բացակայության կամ այլ հիմքերով: Ընկերությունը չի կրում Պատվերի մերժումը պատճառաբանելու պարտավորություն:

7.3.3. Հաճախորդը պարտավոր է որպես փոխառության ապահովում Ընկերությանը տրամադրել դրամական միջոցներ և/կամ Արժեթղթեր: Ապահովման առարկա կազմող դրամական միջոցների և/կամ Արժեթղթերի շրջանակը և ծավալը Ընկերության և Հաճախորդի միջև համաձայնեցվում են Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով:

7.3.4. Փոխառության դիմաց Ընկերությունը գանձում է տոկոսներ: Տոկոսների չափը սահմանվում է Սակագներով կամ Կողմերի փոխադարձ

համաձայնությամբ: Տոկոսների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել ՀՀ օրենսդրությամբ թույլատրելի առավելագույն սահմանաչափը:

7.3.5. Փոխառության տրամադրման օրվա համար տոկոսներ չեն գանձվում:

7.3.6. Հաճախորդը փոխառության վերադարձը և հաշվարկված տոկոսների վճարումը կատարում է փոխառության տրամադրման օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված պարտավորության չկատարման դեպքում Ընկերությունն իրավասու է արտադատական կարգով բռնագանձելու և իրացնելու (կիրառելիության դեպքում) որպես ապահովում ներդրված դրամական միջոցները և/կամ Արժեթղթերը: Դրանց անբավարարության դեպքում պարտավորության մնացորդը կարող է անակցեպտ կարգով գանձվել Հաճախորդի Դրամական հաշվից:

7.4. Խորհրդատվական ծառայություններ

7.4.1. Ընկերությունը խորհրդատվական ծառայությունների շրջանակներում Հաճախորդին տրամադրում է խորհրդատվություն իրավաբանական անձանց կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության, ընկերությունների վերակազմակերպման հարցերի վերաբերյալ:

7.4.2. Խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանները (ներառյալ՝ շրջանակները և գինը) Ընկերությունը և Հաճախորդը համաձայնեցնում են Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով:

7.4.3. Հաճախորդը կրում է խորհրդատվական ծառայությունների պատշաճ մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվությունը Ընկերությանը չտրամադրելու հետ կապված բոլոր բացասական հետևանքները:

7.5. Հետազոտությունների, վերլուծությունների, ընդհանուր ներդրումային առաջարկների կազմում և տարածում

7.5.1. Ընկերությունը կարող է մշակել և տարածել ֆինանսական շուկայի վերաբերյալ հետազոտություններ, վերլուծություններ, ընդհանուր ներդրումային առաջարկներ, այլ վերլուծական և/կամ մարքեթինգային նյութեր:

7.5.2. Սույն կանոնների 7.5.1. կետում նշված նյութերն ունեն բացառապես տեղեկատվական բնույթ և, Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի՝ այդ նյութերի հիման վրա կայացրած ներդրումային որոշումների համար:

7.6. Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների իրականացում

7.6.1. *Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների իրականացման ընդհանուր դրույթներ*

Ընկերության կողմից բրոքերային գործառնության շրջանակներում իրականացվող արտարժույթի անկանխիկ եղանակով իրականացվող առք ու

վաճառքի գործառնությունները կարող են լինել երկու տեսակի՝ ներքին և արտաքին:

- 7.6.1.1. Ներքին գործառնություններ. Ընկերության և Հաճախորդի միջև ուղղակի գործարքներ, որտեղ Ընկերությունը հանդես է գալիս որպես կոնտրագենտ:
- Ներքին գործառնություններում Ընկերությունը հանդես է գալիս որպես Հաճախորդի կոնտրագենտ:
 - Գործարքի պայմանները, ներառյալ փոխարժեքը և հաշվարկային պայմանները, համաձայնեցվում են նախքան գործարքի իրականացումը:
 - Փոխարժեքը արտացոլում է շուկայի գործող փոխարժեքը՝ ճշգրտված Ընկերության կողմից սահմանված հավելավճարով:
 - Ընկերությունը պարտավոր չէ բացահայտել վճարները, միջնորդավճարները կամ հավելավճարները, քանի որ դրանք ներառված են համաձայնեցված պայմաններում:
- 7.6.1.2. Արտաքին գործառնություններ. Գործարքներ, որոնք իրականացվում են Ընկերության միջնորդությամբ Հաճախորդի և երրորդ կողմի միջև:
- Արտաքին գործարքներում Ընկերությունը հանդես է գալիս որպես միջնորդ Հաճախորդի և երրորդ կողմի միջև:
 - Հաճախորդի պատվերը ենթակա է կատարման շուկայական պայմաններին և Հաճախորդի ցուցումներին համապատասխանության պայմաններով:
 - Վճարները, միջնորդավճարները և այլ կիրառելի ծախսերը Հաճախորդին պետք է բացահայտվեն նախքան գործարքի կատարումը:

7.6.2. Գործառնության իրականացման կանոններ

- 7.6.2.1. Գործարքի Պատվերը
- Հաճախորդի համար արժույթով ցանկացած գործարք պետք է իրականացվի հետևյալի հիման վրա.
 - Արտարժույթի առք ու վաճառքի վերաբերյալ պատվեր արտաքին գործարքների դեպքում:
 - Արտարժույթի առք ու վաճառքի վերաբերյալ պայմանագիր ներքին գործարքների դեպքում:
 - Պատվերները և/կամ Պայմանագրերը պետք է Ընկերությանը ներկայացվեն Պայմանագրով սահմանված տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով մինչև գործարքի իրականացումը:
- 7.6.2.2. Պատվերի և/կամ Պայմանագրի ձևանմուշ
- 7.6.2.3. Հաճախորդը պետք է ներկայացնի արտարժույթի առք ու վաճառքի՝ Ընկերության պաշտոնական կայքում նշված ձևաչափերին համապատասխանող Պատվեր և/կամ Պայմանագիր, կամ Հաճախորդի նախընտրած ցանկացած այլ ձևաչափով, որը, սակայն, պետք է պարունակի Ընկերության կողմից սահմանված բոլոր պահանջվող տեղեկատվությունը: Պատվերի և/կամ Պայմանագրի կառավարում

- Հաճախորդը կարող է ներկայացնել, փոփոխել կամ հետ կանչել արժույթի առք ու վաճառքի պատվերները կամ պայմանագրերը՝ 6.1 կետում նշված ընթացակարգին համապատասխան:
- 7.6.2.4. Հաշվարկներ
- 7.6.2.5. Ներքին գործարքների դեպքում հաշվարկները կատարվում են Ընկերության ներքին հաշիվների միջոցով: Արտաքին գործարքների դեպքում հաշվարկները կառավարվում են Ընկերության կողմից՝ ապահովելով Հաճախորդի և երրորդ կողմի միջև հաշվարկների պատշաճ կատարումը: Հաշվեկշռի առկայություն
- 7.6.2.6. Հաճախորդի կողմից պատվիրված արտարժույթի առք ու վաճառքի գործարքները կարող են կատարվել միայն Ընկերության մոտ Հաճախորդի ներդրումային հաշվում առկա միջոցների մնացորդի շրջանակներում: Հաճախորդը պետք է ապահովի, որ բավարար միջոցներ լինեն գործարքն իրականացնելու համար, նախքան Պատվեր և/կամ Պայմանագիր ներկայացնելը:

8. Հաճախորդի միջոցներին տիրապետումը և դրանց վերադարձը

8.1. Իր տիրապետմանը հանձնված՝ Հաճախորդի միջոցների պաշտպանության նպատակով Ընկերությունը.

- 8.1.1. վարում է այնպիսի հաշվառում և հաշիվներ, որոնք թույլ են տալիս ցանկացած պահի այդ պահի դրությամբ առանձնացնել յուրաքանչյուր Հաճախորդի միջոցները այլ Հաճախորդների, ինչպես նաև Ընկերության սեփական միջոցներից,
- 8.1.2. ապահովում է տեղեկատվության, հաշիվների վարումն և հաշվառման ճշգրտությունը և համապատասխանությունն իր տիրապետմանը և/կամ կառավարմանը փաստացի հանձնված՝ Հաճախորդի դրամական միջոցներին և Արժեթղթերին,
- 8.1.3. պարբերաբար իրականացնում է համեմատություններ, ճշգրտումներ իր և այն անձանց մոտ առկա՝ Հաճախորդի միջոցների վերաբերյալ հաշիվների, տեղեկատվության, գրանցումների միջև, որոնց մոտ պահվում են Հաճախորդի միջոցները, ինչպես նաև Հաճախորդի Արժեթղթերի և Դրամական հաշիվների մնացորդների, դրանց մուտքերի և ելքերի միջև,
- 8.1.4. ապահովում է, որ երրորդ անձի մոտ պահվող՝ Հաճախորդի Արժեթղթերը հնարավոր լինի առանձնացնել իր սեփական Արժեթղթերից, ինչպես նաև երրորդ անձի Արժեթղթերից,
- 8.1.5. ձեռնարկում է անհրաժեշտ կազմակերպական միջոցներ Հաճախորդի միջոցների անբարեխիղճ կամ չթույլատրված օգտագործման, մեքենայությունների, թերի հաշվառման կամ անտեսման արդյունքում Հաճախորդի միջոցների կամ այդ միջոցների հետ կապված իրավունքների կորստի ռիսկը կառավարելու համար:

- 8.2. Ընկերությունն ինքն է ընտրում Հաճախորդի միջոցների պահպանման վայրերը՝ հաշվի առնելով նպատակահարմարությունը և Հաճախորդի պահանջունքները: Համապատասխան Պատվերի ներկայացմամբ Հաճախորդը կարող է Ընկերությանը հանձնարարել իր միջոցները Ընկերության Անվանատիրոջ և այլ՝ Հաճախորդների միջոցների հաշվառման համար նախատեսված հաշիվներից տեղափոխել իր սեփական Արժեթղթերի կամ բանկային հաշիվներին: Սույն կետում նշված Պատվերները կատարվում են հնարավորինս ողջամիտ ժամկետներում: Սույն կետում նշված՝ արժեթղթերի փոխանցման Պատվերը ներկայացվում է «Ազատ առաքում» ձևով, իսկ դրամական միջոցների փոխանցման Պատվերը՝ Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում սահմանված ձևով:
- 8.3. Պայմանագրի կնքմամբ Հաճախորդը տալիս է իր նախնական գրավոր համաձայնությունն առ այն, որ Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդի միջոցները տիրապետել և օգտագործել Ընկերության գործառնական պրակտիկային համապատասխան եղանակներով, որը ներառում է Հաճախորդի միջոցներն ի շահ Ընկերության օգտագործման հանձնելը/փոխանցելը, որպես ավանդ ներդնելը, գրավադրելը, ինչպես նաև այլ նմանատիպ պրակտիկաներ, պայմանով, որ նման գործողությունները համապատասխանում են կիրառելի օրենսդրությանը և կարգավորումներին: Սույն դրույթը չի ազդում կիրառելի օրենսդրության պահանջների համաձայն Հաճախորդի միջոցները պաշտպանելու և վերադարձնելու Ընկերության պարտավորությունների վրա:
- 8.4. Երրորդ անձանց (բանկերի և դեպոզիտարիաների), որոնց մոտ Ընկերությունը պահպանում է Հաճախորդների միջոցները, ընտրությունը կատարվում է սույն կանոնների 13-րդ գլխով սահմանված չափանիշների խստիվ պահպանմամբ:
- 8.5. Հաճախորդի միջոցների տիրապետման ամբողջ ընթացքում (ներառյալ՝ այդ միջոցներն ի շահ իրեն օգտագործելիս) Ընկերությունը խստորեն պահպանում է ՀՀ օրենսդրության պահանջները:
- 8.6. Պայմանագիրը լուծելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Ընկերությունը հաճախորդին կամ նրա ներկայացուցչին է փոխանցում հաճախորդին պատկանող միջոցները՝ Հաճախորդի նշած հաշվին/հաշիվներին փոխանցմամբ: Միաժամանակ, Ընկերությունն իրավասու է նվազեցնել այն ծախսերը և միջնորդավճարները, որոնք ենթակա են պահման միջոցների փոխանցման ապահովման համար:

9. Հաճախորդի գործելը լիազորված անձի միջոցով

- 9.1. Պայմանագրի շրջանակներում Հաճախորդը կարող է գործել լիազորված անձի միջոցով:

- 9.2. Իր իրավասությունների իրականացումը երրորդ անձի լիազորելու համար Հաճախորդը ստորագրում և Ընկերությանն է ներկայացնում լիազորագիր՝ սույն կանոնների հավելված 3-ով սահմանված կամ այլ համաձայնեցված ձևով, որում մանրամասն նշվում են լիազորված անձի լիազորությունների շրջանակը և ծավալները (սահմանափակումները):
- 9.3. Պայմանագրից բխող՝ Ընկերության հետ իրավահարաբերություններում լիազորված անձի գործողությունները իրավունքներ և պարտականություններ ստեղծում, դադարեցնում փոփոխում են բացառապես Հաճախորդի համար՝ անկախ Ընկերության՝ լիազորված անձի հետ որևէ իրավահարաբերությունների մեջ գտնվելու փաստից:
- 9.4. Ընկերությունը Հաճախորդի առջև պատասխանատվություն չի կրում լիազորված անձի գործողությունների հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար:

10. Շահերի բախման կանխարգելման և հաղթահարման քաղաքականություն

10.1. Սույն գլուխը հանդիսանում է Ընկերության Շահերի բախման կանխարգելման և հաղթահարման քաղաքականությունը:

10.1.1. Ընկերության և Ղեկավարների/աշխատակիցների միջև շահերի բախումների կանխարգելումը և հաղթահարումը

- 10.1.1.1. Ղեկավարները և Ընկերության համապատասխան աշխատակիցները իրենց հասանելիության ներքո գտնվող տեղեկատվության շրջանակներում անընդհատ դիտարկում և գնահատում են իրենց և Ընկերության շահերի բախման առաջացման հնարավորությունը:
- 10.1.1.2. Եթե Ղեկավարը կամ Ընկերության այլ աշխատակիցը սույն կանոնների 10.1.1.1. կետով սահմանված կարգով հանգում է եզրակացության իր և Ընկերության շահերի միջև բախման առաջացման հնարավորության մասին, կամ այդպիսի շահերի բախման առաջացման դեպքում դրա մասին տեղեկացվում է Գործադիր տնօրենը:
- 10.1.1.3. Եթե Ընկերությանը չի հաջողվում կանխարգելել Ղեկավարի կամ Ընկերության այլ աշխատակցի և Ընկերության շահերի միջև բախումը, ապա նախապատվությունը տրվում է Ընկերության շահերին:

10.1.2. Ընկերության և Հաճախորդի միջև շահերի բախումների կանխարգելումը և հաղթահարումը

- 10.1.2.1. Ընկերությունը ձեռնարկում է միջոցներ իր և Հաճախորդի միջև շահերի հնարավոր բախումները կանխելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ նվազեցնելու համար:
- 10.1.2.2. Իր և Հաճախորդի միջև շահերի հնարավոր բախումները կանխելու նպատակով Ընկերությունը ձեռնպահ է մնում իր և Հաճախորդի միջև շահերի բախման առարկա հանդիսացող գործարքների կնքումից, իսկ դրա անհնարինության դեպքում նախապատվությունը տալիս է Հաճախորդի շահերին:

- 10.1.2.3. Ընկերությունը Հաճախորդի Պատվերները կատարում է հնարավոր լավագույն պայմաններով՝ խստորեն պահպանելով Պատվերների կատարման քաղաքականության դրույթները:
- 10.1.2.4. Ընկերության ներդրումային առաջարկները, գովազդային և տեղեկատվական նյութերը պարտադիր պարունակում են հնարավոր շահերի բախումների մասին նշում:
- 10.1.2.5. Ընկերությունն ապահովում է, որ իր կողմից շահագործվող առևտրային հարթակներում և տերմինալներում Ընկերության բրոքերների և դիլերների իրավասությունները լինեն տարանջատված, ներառյալ՝ միմյանց հանձնարարականները և գործարքները տեսանելի չլինեն:
- 10.1.3. Հաճախորդների միջև շահերի բախումների կանխարգելումը և հաղթահարումը*
- 10.1.3.1. Ընկերությունը ձեռնարկում է միջոցներ Հաճախորդի և այլ հաճախորդների միջև շահերի հնարավոր բախումները կանխելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ նվազեցնելու համար:
- 10.1.3.2. Այն դեպքում, երբ Հաճախորդի և այլ հաճախորդների Պատվերները հանգեցնում են շահերի բախման, Ընկերությունն առաջնությունը տալիս է ավելի վաղ ներկայացված Պատվերին՝ պահպանելով նաև Պատվերների կատարման քաղաքականությամբ սահմանված այլ պայմանները:

11. Պատվերների կատարման քաղաքականություն

- 11.1. Ընկերությունը ձեռնարկում է բոլոր խելամիտ միջոցները, որպեսզի Պատվերները կատարի Հաճախորդի համար լավագույն պայմաններով և նրա համար ապահովի հնարավոր լավագույն արդյունքը:
- 11.2. Պատվերները Հաճախորդի համար լավագույն պայմաններով կատարելու նպատակով Ընկերությունը հաշվի է առնում յուրաքանչյուր Պատվերի բոլոր առանձնահատկությունները և բնորոշ գծերը, ներառյալ՝ գինը, Պատվերից բխող՝ Հաճախորդի ծախսերը, Պատվերի կատարման ժամկետը (արագությունը), Պատվերի պատշաճ և արագ կատարման (ներառյալ՝ վերջնահաշվարկի պատշաճ իրականացման) հավանականությունը, Պատվերի ընդհանուր ծավալը, Պատվերում նշված՝ գործիքների քանակը և բնութագրերը (օրինակ՝ դասը, տեսակը և այլն), Պատվերի բնույթը, Պատվերի հետ կապված՝ Հաճախորդի ցուցումները, Պատվերում նշված՝ Գործարքի կնքման վայրի առանձնահատկությունները, ինչպես նաև Պատվերի և դրա կատարման հետ կապված այլ՝ Ընկերության կարծիքով նշանակալի գործոններ: Սույն կետում նշված՝ Հաճախորդի առանձնահատուկ ցուցումների պահպանմամբ Պատվերի կատարումը համարվում է Պատվերի կատարում լավագույն պայմաններով:
- 11.3. Շուկայական Պատվերում նշված Արժեթղթի/Ածանցյալ ֆինանսական գործիքի/Արտարժույթի՝ շուկայում առկայության դեպքում Պատվերը կատարվում է մինչև ներկայացման աշխատանքային օրվա ավարտը:

- Լիմիտային Պատվերները կատարվում են համապատասխան պայմանների առկայության պահին:
- 11.4. Ի հավելումն Պատվերի՝ սույն կանոնների 11.2. կետում նշված առանձնահատկությունների՝ Պատվերը Հաճախորդի համար լավագույն պայմաններով կատարելու նպատակով Ընկերությունը հաշվի է առնում նաև Հաճախորդի աճանձնահատկությունները, ներառյալ՝ նրա դասակարգումը որպես Պրոֆեսիոնալ կամ Ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ, նրա կողմից տրվող՝ Պատվերների կատարման ընդհանուր կարգին առնչվող ցուցումները, նրա նախապատվությունները, ինչպես նաև Հաճախորդին առնչվող այլ՝ Ընկերության կարծիքով նշանակալի գործոններ:
- 11.5. Պատվերը կատարելիս Ընկերությունն ընտրում է Գործարքի կնքման այն վայրը, որի միջոցով Պատվերի կատարման դեպքում Հաճախորդի համախառն ծախսերը (Արժեթղթերի գինը և գործարքի կնքման հետ կապված այլ ծախսերը) կլինեն նվազագույնը:
- 11.6. Լավագույն գնային պայմանները որոշելիս հաշվի են առնվում ինչպես համապատասխան Պատվերում նշված ֆինանսական գործիքի գնման/վաճառքի գինը, այնպես էլ այն բոլոր միջնորդավճարները և ծախսերը, որոնք Հաճախորդը կկրի Պատվերի կատարման արդյունքում:
- 11.7. Պատվերը համարվում է լավագույն պայմաններով կատարված, եթե Ընկերությունն այն հաղորդում է սույն կանոնների 13-րդ գլխով սահմանված չափանիշներով ընտրված Գործընկերների կատարմանը:
- 11.8. Ընկերությունն անընդհատ իրականացնում է Պատվերների կատարման ընթացակարգի մշտադիտարկում՝ այն Պատվերների կատարման քաղաքականությանը, ինչպես նաև լավագույն փորձին համապատասխանության տեսանկյունից:
- 11.9. Պատվերների կատարման քաղաքականությանը հետևելը չի բացառում Պատվերների կատարման հետ կապված ռիսկերը, որոնք մանրամասնորեն ներկայացված են սույն կանոնների հավելված 5-ում:

12. Տեղեկատվության բացահայտում

- 12.1. *Տեղեկատվություն Ընկերության մասին*
Ընկերության, նրա կոնտակտային տվյալների և գործունեության լիցենզիաների մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է սույն կանոնների հավելված 4-ում:
- 12.2. *Տեղեկատվություն գործիքների և դրանց առնչվող ռիսկերի մասին*
Ֆինանսական գործիքների և դրանցից յուրաքանչյուրին առնչվող ռիսկերի մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է սույն կանոնների հավելված 5-ում:
- 12.3. *Տեղեկատվություն ներդրողների պաշտպանության մեխանիզմների մասին*

Ներդրողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցների և կառուցակարգերի մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է սույն կանոնների հավելված 6-ում:

13. Դեպոզիտարիաների, բրոքերների և այլ Գործընկերների ընտրության չափանիշները

- 13.1. Ընկերությունը սույն կանոններով նախատեսված ծառայությունների կամ դրանց մի մասի մատուցումը պատվիրակում է Գործընկերներին միայն այն դեպքում, եթե Ընկերության կարծիքով՝ այդպիսի պատվիրակման հետևանքով Հաճախորդին կմատուցվեն ավելի բարձրորակ ծառայություններ:
- 13.2. Գործընկերների ընտրությունը տեղի է ունենում ՀՀ օրենսդրությամբ և սույն գլխով սահմանված չափանիշների պահպանմամբ:
- 13.3. Գործընկերոջ գրանցումը, լիցենզավորումը, գործունեության թույլտվությունները և գործունեությունը պետք է խստորեն համապատասխանեն իր գրանցման երկրի օրենսդրությանը:
- 13.4. Գործընկերոջ գործունեությունը պետք է համապատասխանի իր գործունեության ոլորտում միջազգայնորեն ընդունված ստանդարտներին և սովորույթներին:
- 13.5. Գործընկերոջ ֆինանսական ցուցանիշները և գործունեության վերաբերյալ բոլոր հաշվետվությունները (ներառյալ՝ ներդրումային ցուցանիշները) պետք է վկայեն նրա արդյունավետ գործունեության մասին:
- 13.6. Ընկերությանը պետք է հասանելի լինի մանրակրկիտ տեղեկատվություն Գործընկերոջ գործունեության պատմության, հիմնական աշխատակիցների, խոշորագույն հաճախորդների, վարձատրության մեխանիզմների մասին:
- 13.7. Այն դեպքերում, եթե Գործընկերոջ գործունեությունն առնչվում է Փաթեթի կառավարմանը կամ դրան նմանատիպ այլ ծառայությունների, Ընկերությանը պետք է հասանելի լինեն փաստաթղթային ապացույցներ առ այն, որ համապատասխան Գործընկերոջ ներդրումային ռազմավարությունն արդյունավետորեն կիրառվել է որոշակի ժամանակ:
- 13.8. Գործընկերոջ ընտրությունը և նրա հետ գործարար հարաբերության հաստատումը տեղի է ունենում Ընկերության բոլոր կիրառելի կորպորատիվ ընթացակարգերի պահպանմամբ:
- 13.9. Գործընկերների առևտրային հարթակները, տերմինալները և այլ տեղեկատվական լուծումները Հաճախորդին տրամադրվում են AS IS սկզբունքով. Ընկերությունը պատասխանատու չէ այդպիսի համակարգերի և լուծումների անսարքությունների, թերությունների և դրանց հետևանքների համար:
- 13.10. Ընկերությունը պատասխանատու չէ սույն գլխի բոլոր չափանիշներին համապատասխանող Գործընկերոջ գործողությունների և/կամ անգործության հետևանքով Հաճախորդին պատճառված վնասների համար:

14. Ռիսկերի կանխարգելմանն ուղղված միջոցներ

- 14.1. Ընկերությունը ներդնում և իմպլեմենտացնում է ռիսկերի համապարփակ կառավարման համակարգ (ներառյալ՝ Օրենքի, այլ իրավական ակտերի պահանջներին և լավագույն միջազգային փորձին համապատասխանող ներքին առուղիս)

15. Գաղտնիության քաղաքականություն

- 15.1. Կապված Հաճախորդին սույն կանոններով սահմանված ծառայությունների մատուցման հետ՝ Ընկերությունը հավաքագրում և մշակում է Հաճախորդի անձնական տվյալները:
- 15.2. Ընկերությունը կարող է Հաճախորդի մասին տեղեկատվություն հավաքագրել նաև այլ՝ ՀՀ օրենսդրությամբ թույլատրելի աղբյուրներից:
- 15.3. Հաճախորդի անձնական տվյալների օգտագործումը և մշակումը կատարվում է ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:
- 15.4. Ընկերությունը կարող է Հաճախորդի անձնական տվյալները բացահայտել իր այն աշխատակիցներին և/կամ Գործընկերներին, որոնք Ընկերության առջև ստանձնել են այդ տեղեկատվության գաղտնիության պահպանման պարտականություն, ինչպես նաև իրավասու հանրային մարմիններին:
- 15.5. Այն դեպքերում, երբ Հաճախորդն օգտագործում է Ընկերության Գործընկերների կայքերը, առևտրային հարթակները և այլ էլեկտրոնային ռեսուրսները, նրա անձնական տվյալների նկատմամբ կիրառվում են համապատասխան հարթակների և կայքերի գաղտնիության քաղաքականությունները:
- 15.6. Ընկերությունը գործադրում է ողջամիտ ջանքեր իր տիրապետմանը հանձնված՝ Հաճախորդի անձնական տվյալների անվտանգության պահպանման համար:

16. Անցումային դրույթներ

- 16.1. Սույն կանոնները հաստատվում են գործադիր տնօրենի որոշմամբ և ուժի մեջ են մտնում Ընկերության պաշտոնական կայքում հրապարակվելու պահից:
- 16.2. Ընկերությունն իրավասու է միակողմանիորեն փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու սույն կանոններում, որոնք Հաճախորդի համար ուժի մեջ են մտնում Ընկերության պաշտոնական կայքում հրապարակվելու պահից, բացառությամբ այն դեպքերի, երբ Հաճախորդն այդ փոփոխությունների՝ Ընկերության պաշտոնական կայքում հրապարակվելու և/կամ դրանց մասին Ընկերության ծանուցումը ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությանը տեղեկացնում է Պայմանագիրը լուծելու իր մտադրության մասին:

Հավելված 1

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1. Հաճախորդի անունը/անվանումը _____
2. Հաճախորդի ՀԾՀ-ն/ՀՎՀՀ-ն _____
3. Հաճախորդի կոդը _____
4. Հաճախորդի դասակարգումը _____

Հիմք

Հաճախորդը		
ներդրումային ընկերություն, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաձյուղ, բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային, կենսաթոշակային ֆոնդ, ներդրումային ֆոնդի կառավարիչ է, կամ օտարերկրյա պետությունում գրանցված իրավաբանական անձ է, որը, տվյալ պետության օրենսդրության համաձայն, իրավունք ունի իրականացնելու սույն ենթակետով սահմանված որևէ անձի գործունեություն.	<input type="checkbox"/> Այո	<input type="checkbox"/> Ոչ
Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետության համայնք, Կենտրոնական բանկ, օտարերկրյա պետություն, օտարերկրյա պետության տեղական ինքնակառավարման մարմին, օտարերկրյա պետության կենտրոնական բանկ է.	<input type="checkbox"/> Այո	<input type="checkbox"/> Ոչ
միջազգային ֆինանսական կազմակերպություն, այդ թվում՝ Արժույթի միջազգային հիմնադրամ, Եվրոպական կենտրոնական բանկ, Եվրոպական ներդրումային բանկ է.	<input type="checkbox"/> Այո	<input type="checkbox"/> Ոչ
իրավաբանական անձ է, որը բավարարում է հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.		

ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքմանը նախորդող տարվա վերջի դրությամբ անձի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 500 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,	<input type="checkbox"/> Այո	<input type="checkbox"/> Ոչ
ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքմանը նախորդող տարվա գործունեությունից ստացված անձի իրացման շրջանառությունը (համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի) գերազանցում է մեկ միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամը,	<input type="checkbox"/> Այո	<input type="checkbox"/> Ոչ
ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման պահին նախորդող ամսվա վերջի դրությամբ (հայտնի չլինելու դեպքում վերջին ամսվան նախորդող ամսվա դրությամբ) անձի ընդհանուր կապիտալը կազմում է 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:	<input type="checkbox"/> Այո	<input type="checkbox"/> Ոչ

Անձ է, ով բավարարում է հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.		
հաճախորդը դիմումի ներկայացմանը նախորդող 4 եռամսյակների ընթացքում արժեթղթերի շուկայում իրականացրել է 10 և ավելի գործարք միջին եռամսյակային կտրվածքով, ընդ որում՝ մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է առնվազն մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ,	<input type="checkbox"/> Այո	<input type="checkbox"/> Ոչ
հաճախորդի արժեթղթերի փաթեթի մեծությունը դիմումի ներկայացման պահին գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,	<input type="checkbox"/> Այո	<input type="checkbox"/> Ոչ
հաճախորդը ֆինանսական շուկայում ունի առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որը պահանջում է հաճախորդին մատուցվող այն ծառայությունների հետ կապված գիտելիքներ, որոնց հետ կապված վերջինս նախաձեռնություն է իրականացնում պրոֆեսիոնալ դասակարգվելու համար:	<input type="checkbox"/> Այո	<input type="checkbox"/> Ոչ

հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից իրականացված գնահատումը հավաստիացնում է, որ հաճախորդը ներդրումային ծառայություններից օգտվելու, ներդրումային որոշում կայացնելու և դրանց հետ կապված ռիսկերն ընկալելու համապատասխան ունակություն և գիտելիք ունի:	<input type="checkbox"/> Այո	<input type="checkbox"/> Ոչ
---	------------------------------	-----------------------------

5. Այլ նշումներ _____

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ գործադիր տնօրեն _____

Ստորագրություն

Ամսաթիվ _____

Հավելված 2.1

ՆՈՐ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Սույն դիմումով _____ ցանկանում է բացել համապատասխան ներդրումային հաշիվ՝ համաձայն Պայմանագրով և «Լենդմարկ Կապիտալ» ՓԲԸ կանոններով սահմանված ընթացակարգերի:

Հաշվի տեսակ	Քանակ
Սեփական Ներդրումային հաշիվ. <input type="checkbox"/>	
Հաճախորդների Ներդրումային հաշիվ ¹	
Ընդհանրական <input type="checkbox"/>	
Առանձնացված <input type="checkbox"/>	

Հաճախորդի վերաբերյալ տվյալներ.

Անուն, ազգանուն/անվանում	
Հաճախորդի կոդ	

Ստորագրություն

Ամսաթիվ _____

Հավելված 2.2

¹ Հաճախորդի հայտարարագրի ձևը, այլ փաստաթղթերի հետ միասին, Հաճախորդը պետք է լրացնի և ներկայացնի Ընկերության պաշտոնական կայքում ներկայացված ձևաչափով:

ԼԸԱՑՈՒՑԻՉ ՀԱՇԻՎ(ՆԵՐ)Ի ԲԱՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ
Փաթեթի կառավարման համար

Ամսաթիվ _____

Սույնով Ձեզ խնդրում ենք բացել համապատասխան ներդրումային հաշիվ՝ համաձայն Պայմանագրով և «Լենդմարկ Կապիտալ» ՓԲԸ կանոններով սահմանված ընթացակարգերի:

Հաշվի տեսակ	Քանակ
Ներդրումային հաշիվ Փաթեթի կառավարման համար	

Հաճախորդի տվյալներ.

Հաճախորդի անուն, ազգանուն/անվանում	
Հաճախորդի հաշվի կոդը Ընկերությունում	

Լիազորված ստորագրողի անուն, ազգանուն _____

Լիազորված ստորագրողի պաշտոն _____

Ստորագրություն _____

Հավելված 3

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

ք. Երևան

*ամսաթիվ*Սույն լիազորագրով _____ (այսուհետ՝ «Հաճախորդ»)
 հաճախորդի անունը/անվանումըլիազորում է _____ (այսուհետ՝ «Ներկայացուցիչ») գործել իր անունից
 ներկայացուցչի անունը
 «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ (այսուհետ՝ «ԼՄԿ») հետ
 իրավահարաբերություններում հետևյալ շրջանակներում և պայմաններով.**1. Ներկայացուցչի լիազորությունների շրջանակը**Ներկայացուցիչը լիազորված է Հաճախորդի անունից և նրա հաշվին
 իրականացնելու հետևյալ գործողությունները.

- բացել ներդրումային հաշիվ,
- լիցքավորել ներդրումային հաշիվը,
- ներդրումային հաշվից ելքագրել գումար/Արժեթղթեր,
- կատարել գործարքներ (գործարքների կատարելու պատվերներ
 ներկայացնել) հետևյալ գործիքներով.
 - արժեթղթեր.
 - պարտատոմսեր,
 - բաժնետոսմեր,
 - ներդրումային ֆոնդերի փայեր,
 - ածանցյալ ֆինանսական գործիքներ.
 - արժեթղթերի սվոփեր,
 - արտարժույթային սվոփեր,
 - փոխարժեքային սվոփեր,
 - գնման օպցիոններ,
 - վաճառքի օպցիոններ,
 - արժեթղթերի ֆյուչրներ,
 - արտարժույթային ֆյուչրներ,
 - արժեթղթերի ֆորվարդներ,
 - արտարժույթային ֆորվարդներ,
 - այլընտրանքային ներդրումային գործիքներ,
 - բարդ (structured) ներդրումային գործիքներ,
- իրականացնել արժեթղթերի և այլ ֆինանսական գործիքների
 պահառության հետ կապված գործառնություններ (գործառնություններ
 կատարելու պատվերներ ներկայացնել),

- ստանալ ֆինանսական գործիքներից եկամուտներ (օրինակ՝ արժեկտրոններ, շահաբաժիններ),
- փոխառությամբ տրամադրել արժեթղթեր և այլ ֆինանսական գործիքներ հետևյալ սահմանաչափերի շրջանակներում. _____,
- փոխառությամբ ստանալ արժեթղթեր և այլ ֆինանսական գործիքներ հետևյալ սահմանաչափերի շրջանակներում. _____,
- արժեթղթերով և այլ ֆինանսական գործիքներով գործարքների կատարման նպատակով փոխառությամբ տրամադրել դրամական միջոցներ հետևյալ սահմանաչափերի շրջանակներում. _____,
- արժեթղթերով և այլ ֆինանսական գործիքներով գործարքների կատարման նպատակով փոխառությամբ ստանալ դրամական միջոցներ հետևյալ սահմանաչափերի շրջանակներում. _____,
- պատվիրել (ներկայացնել պատվեր) և ստանալ ներդրումային խորհրդատվություն,
- իրականացնել արժեթղթերի և այլ ֆինանսական գործիքների վերջնահաշվարկին առնչվող իրավունքներ,
- կազմել/ներկայացնել/փոփոխել ներդրումային հայտարարագրեր,
- ստանալ գործարքների և ֆինանսական գործիքների մասին հաշվետվությունները և ԼՄԿ-ի կողմից տրամադրվող այլ տեղեկատվությունը,
- ԼՄԿ-ին ներկայացնել նրա կողմից պահանջվող՝ Հաճախորդին առնչվող ցանկացած տեղեկատվություն (ներառյալ՝ իրական շահառուների մասին տվյալներ),
- ստորագրել ցանկացած համաձայնություններ, հայտարարություններ կամ այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են վերոնշյալ լիազորությունների պատշաճ իրականացման համար:

2. Գործողության ժամկետը

Սույն լիազորագիրը գործում է _____ ժամկետով:

լրացնել ժամկետը

Խնդրում ենք հաշվի առնել, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ լիազորագրի գործողության առավելագույն ժամկետը 3 տարի է:

3. Նույնականացնող տվյալներ

Հաճախորդ Անուն/անվանում

Պետական գրանցման/անձը նույնականացնող փաստաթղթի
համար _____

ՀՎՀՀ/ՀԾՀ _____

Հեռախոսահամար _____

Էլ. Փոստ _____

Օրինական ներկայացուցիչ _____

Ներկայացուցիչ Անուն/անվանում _____

Պետական գրանցման/անձը նույնականացնող փաստաթղթի
համար _____

ՀՎՀՀ/ՀԾՀ _____

Հեռախոսահամար _____

Էլ. Փոստ _____

Օրինական ներկայացուցիչ _____

Ստորագրություն _____

Հավելված 4

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերություն

Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա N 16՝ տրված ՀՀ
կենտրոնական բանկի կողմից 29.03.2019թ.

ՀՎՀՀ՝ 02695279

Իրավաբանական և գործունեության վայրի հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Վազգեն
Սարգսյան 10, 118 տարածք

Պաշտոնական ինտերնետային կայք՝ www.landmarkcapital.am*

Պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցե՝ info@landmarkcapital.am

Հեռախոսահամար՝ +374 60 277274

Կապի հաստատման և տեղեկատվության փոխանակման լեզուներ՝ հայերեն,
անգլերեն, ռուսերեն

**www.landmarkcapital.am-ը «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերության միակ պաշտոնական ինտերնետային կայքն է: Ցանկացած այլ ինտերնետային կայքեր, որոնց անվանումներում և/կամ բովանդակությունում կա նմանություն www.landmarkcapital.am կայքին, առնչություն չունեն «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի հետ, և «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ն պատասխանատվություն չի*

*կրում այդպիսի աղբյուրների բովանդակության, ինչպես նաև դրանց օգտագործմամբ
պատճառված վնասների համար:*

Հավելված 5

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌՆՉՎՈՂ ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ

Ֆինանսական շուկաներում գործարքների իրականացման հետ կապված ՌԻՍԿԸ ԿՐՈՒՄ Է ՀԱՃԱՆՈՐԴԸ: Ընկերությունը ՉԻ ՓՈՆԻԶԱՏՈՒՑԵԼՈՒ ԿԱՃԱԽՈՐԴԻ ՎՆԱՍՆԵՐՐ, ԵՔԵ ՂՐԱՆՔ չեն պատճառվել Ընկերության անբարեխիղճ վարքագծի արդյունքում:

1. Ռիսկերի հիմնական տեսակներ

Ներդրումային գործունեությանը և առանձին ֆինանսական գործիքների բնորոշ են ռիսկի հետևյալ տեսակները (խնդրում ենք հաշվի առնել, որ ռիսկերի՝ ստորև ներկայացվող ցանկը սպառիչ չէ).

Գների տատանման ռիսկ

Տարբեր գործոնների ազդեցության ներքո գործիքի գնի տատանման (աճի/նվազման) ռիսկ: Քանի որ նշված գործոնները չեն գտնվում Ընկերության վերահսկողության տակ, գնային տատանումների հետևանքով հաճախորդի պորտֆելի արժեքը կարող է էականորեն նվազել:

Թողարկողի անվճարունակության ռիսկ

Թողարկողի՝ պարտքը ներդրողներին վերադարձնելու անկարողության ռիսկ, ինչի հետևանքով ներդրողը կարող է կորցնել ներդրած ամբողջ գումարը կամ դրա մի մասը:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկ

Համապատասխան օրենսդրական փոփոխությունների հետևանքով (օրինակ՝ հարկային պարտավորությունների վերանայում) ներդրողների իրավունքների և պարտավորությունների փոփոխության ռիսկ:

Սոցիալ-քաղաքական ռիսկ

Համապատասխան երկրում (երկրներում) տեղի ունեցող սոցիալ-քաղաքական ցնցումների և իրադարձությունների (օրինակ՝ հեղաշրջումներ, զանգվածային անկարգություններ և այլն) պատճառով ներդրողների համար անբարենպաստ հետևանքների առաջացման ռիսկ:

Կեղծիքի ռիսկ

Ֆինանսական գործիքի թողարկման, տեղաբաշխման, վաճառքի ընթացքում տեղի ունեցած կեղծիքների և այլ հանցագործությունների (ներառյալ՝ տեղեկատվության թաքցնելը ներդրողներից) արդյունքում ներդրողների համար անբարենպաստ հետևանքների առաջացման ռիսկ:

Գործառնական ռիսկ

Տեղեկատվական, էլեկտրական, էլեկտրոնային, կապի և այլ համակարգերի անսարքության կամ շուկայի ոչ կատարյալ ենթակառուցվածքով պայմանավորված (այդ թվում գործառնությունների իրականացման տեխնոլոգիաների, կառավարման, հաշվառման և հսկման գործընթացների կամ անձնակազմի գործողության կամ անգործության, բորսաների, դեպոզիտարիաների, հաշվարկաքլիրինգային կազմակերպությունների տեղեկատվական համակարգերի թերությունների և անսարքությունների) սխալների հետևանքով ուղղակի կամ անուղղակի կորուստների առաջացման ռիսկ:

Տեխնոգեն ռիսկ

Մարդու տնտեսական գործունեության արդյունքում տեղի ունեցող պատահարների (օրինակ՝ վթարներ, հրդեհներ) հետևանքով կորուստներ կրելու ռիսկ:

Բնական ռիսկեր

Մարդու կամքից անկախ տեղի ունեցող տարերային աղետների հետևանքով կորուստներ կրելու ռիսկ:

**Իրացվելիության
նվազման
ռիսկ**

Համապատասխան գործիքի նկատմամբ շուկայի մասնակիցների հետաքրքրության կորստի ռիսկ: Հետաքրքրության այդպիսի կորստի պատճառ կարող են հանդիսանալ թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները, կորպորատիվ գործողությունները, շուկայի ընդհանուր վիճակը, կարգավորվող շուկաների կանոնները և այլն, որոնք կարող են հանգեցնել գործիքի գնի, և, հետևաբար, նաև հաճախորդի պորտֆելի արժեքի նվազման:

2. Ֆինանսական գործիքների նկարագրություն և դրանց բնորոշ ռիսկեր

Գործիք	Նկարագրություն	Ռիսկեր
<p>Պարտատոմս</p>	<p>Պարտքային արժեթուղթ, որը հավաստում է թողարկողի պարտավորությունը՝ ներդրողին վերադարձնելու պարտատոմսի մայր գումարը (անվանական արժեքը), ինչպես նաև վճարելու թողարկման պայմաններով նախատեսված տոկոսները (արժեկտրոններ): Այլ կերպ՝ թողարկելով պարտատոմս՝ ընկերությունը կամ պետությունը պարտքով գումար է ներգրավում: Ըստ ժամկետայնության կարող են լինել.</p> <ol style="list-style-type: none"> կարճաժամկետ՝ մարման (պարտքի գումարի վերադարձի) ժամկետը մեկ տարուց պակաս է, միջնաժամկետ՝ մարման (պարտքի գումարի վերադարձի) ժամկետը մեկից հինգ տարի է, երկարաժամկետ՝ մարման (պարտքի գումարի վերադարձի) ժամկետը հինգ տարուց ավելի է: <p>Սովորաբար պարտատոմսի շուկայական արժեքն արտահայտվում է որպես անվանական արժեքի նկատմամբ տոկոս. եթե այն 100%-ից ավել է, ապա շուկայական արժեքը գերազանցում է անվանական արժեքը, իսկ եթե 100%-ից պակաս է, ապա շուկայական արժեքը ցածր է անվանական արժեքից: Ըստ թողարկողի՝ պարտատոմսերը դասակարգվում են հետևյալ տեսակների՝</p> <ol style="list-style-type: none"> պետական՝ թողարկված Հայաստանի Հանրապետության (ի դեմս Ֆինանսների նախարարության) կամ այլ պետության կողմից, 	<p>Պարտատոմսն ավանդաբար համարվում է ամենաանվտանգ և հուսալի գործիքը: Այնուամենայնիվ, պարտատոմսերում ներդրումները գերծ չեն ռիսկայնությունից: Ռիսկի հիմնական տեսակները, որոնք բնորոշ են այդպիսի ներդրումներին, գների տատանումներն են և թողարկողի անվճարունակությունը:</p>

	<p>2. մունիցիպալ՝ թողարկված համայնքների (ի դեմս տեղական ինքնակառավարման մարմինների) կողմից, 3. կորպորատիվ՝ թողարկված մասնավոր կազմակերպությունների կողմից:</p>	
Բաժնետոմս	<p>Բաժնային արժեթուղթ, որով հավաստվում են ներդրողի՝ թողարկողի կառավարմանը մասնակցելու, նրա եկամուտներից շահութաբաժիններ ստանալու, ինչպես նաև լուծարումից հետո մնացած գույքից բաժին ստանալու իրավունքները:</p>	<p>Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունն ուղղակի ազդեցություն ունի բաժնետերերի եկամուտների և ներդրումների ճակատագրի վրա: Մասնավորապես, ընկերության սնանկացումը և լուծարումը հանգեցնում է ներդրման ամբողջ գումարի կորստին: Ինչ վերաբերում է շահութաբաժիններին, ապա դրանց վճարումը թողարկողի հայեցողությունն է. Այսինքն՝ հնարավոր է՝ երկար ժամանակահատվածներում շահաբաժինների վճարումների չկատարվել:</p>
Օպցիոն	<p>Համաձայնություն, որով մի կողմը (օպցիոնի գնորդը) իրավունք է ձեռք բերում վաճառել (գնել) որոշակի բազիսային ակտիվ (արժույթ, արժեթուղթ կամ այլ ակտիվ) պայմանագրում նշված ժամկետում և գնով, իսկ մյուս կողմը (օպցիոնի վաճառող) պարտավորություն է ստանձնում գնել (վաճառել) այդ ակտիվը (արժույթ, արժեթուղթ կամ այլ ակտիվ): Կախված օպցիոնի հիմքում ընկած ակտիվի տեսակից՝ առանձնացնում են արժութային օպցիոնները, արժեթղթերով օպցիոնները կամ այլ ակտիվներով օպցիոնները: Վաճառքի իրավունք</p>	<p>Որպես բազիսային ակտիվի գներից կախված ածանցյալ գործիքներ՝ օպցիոնները համարվում են ռիսկային ներդրումներ, քանի որ առանց համապատասխան ներդրումային գիտելիքների և փորձի դժվար է կանխատեսել շուկայի (առանձին գործիքի) զարգացման ուղղությունը՝ հատկապես երկարաժամկետ կտրվածքով:</p>

	<p>շնորհող օպցիոնը կոչվում է վաճառքի (put) օպցիոն, իսկ գման իրավունքը շնորհողը՝ առքի (call) օպցիոն:</p>	
<p>Սվոփ</p>	<p>Արժույթային սվոփը համաձայնություն է, որը նախատեսում է պայմանագրով սահմանված փոխարժեքով (սփոթ փոխարժեք) երկու արժույթների փոխանակում (առք/վաճառք)՝ այդ արժույթները պայմանագրով սահմանված ժամկետում և փոխարժեքով (ֆորվարդ փոխարժեք) հետ փոխանակելու (վաճառք/առք), ինչպես նաև պայմանագրով նախապես սահմանված տոկոսագումարներ փոխանակելու պայմանով: Սվոփի այս տեսակի դեպքում կարող են փոխանակվել ֆիքսված տոկոսադրույքը լողացող տոկոսադրույքի հետ, ինչպես նաև 2 տարբեր լողացող տոկոսադրույքները: Փոխարժեքային սվոփը արժույթային սվոփի պարզ տեսակ է, որը նախատեսում է պայմանագրով սահմանված փոխարժեքով (սփոթ փոխարժեք) երկու արժույթների փոխանակում (առք/վաճառք)՝ այդ արժույթները պայմանագրով սահմանված ժամկետում և փոխարժեքով (ֆորվարդ փոխարժեք) հետ փոխանակելու (վաճառք/առք) պայմանով: Տոկոսադրույքային սվոփը համաձայնություն է, որը նախատեսում է տոկոսային վճարումների տեսքով դրամական հոսքերի փոխանակում: Տոկոսադրույքային սվոփի պարագայում հիմքում ընկած դրամական միջոցները չեն փոխանակվում, այլ փոխանակվում են միայն այդ դրամական միջոցների նկատմամբ հաշվարկված տոկոսային վճարումները:</p>	<p>Որպես բարդ գործիքի՝ սվոփին բնորոշ են ածանցյալ ֆինանսական գործիքների հատուկ բոլոր ռիսկերը:</p>

	Մվուփի այս տեսակի դեպքում կարող են փոխանակվել ֆիքսված տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարները լողացող տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարների հետ, ինչպես նաև 2 տարբեր լողացող տոկոսադրույքներով հաշվարկված տոկոսագումարները:	
Ֆորվարդ	Կարգավորվող շուկայից դուրս կնքվող համաձայնությունն ակտիվի (արժույթ, արժեթուղթ կամ այլ ակտիվ) ապագա գնման կամ վաճառքի վերաբերյալ՝ նախապես սահմանված գնով և չստանդարտացված պայմաններով, որի դեպքում կողմերը ստանձնում են գործարքի վերջնահաշվարկի իրականացման պարտավորություն: Կախված ֆորվարդի (ֆորվարդ գործարքի) հիմքում ընկած ակտիվի տեսակից՝ ֆորվարդը (ֆորվարդ գործարքը) համարվում է արժութային ֆորվարդ, արժեթղթերով ֆորվարդ կամ այլ ակտիվներով ֆորվարդ:	Քանի որ ֆորվարդն անմիջապես դրամական հոսքեր չի գեներացվում (ըստ պայմանագրի պայմանների՝ դրանք գեներացվում են ապագայում) հիմնական ռիսկը կապված է կոնտրագենտի անվճարունակության, սնանկության, ինչպես նաև ցանկացած այլ պատճառով պարտավորության չկատարման հետ:
Ֆյուչերս	Կարգավորվող շուկայում կնքվող համաձայնությունն ակտիվի (արժույթ, արժեթուղթ կամ այլ ակտիվ) ապագա գնման կամ վաճառքի վերաբերյալ՝ նախապես սահմանված գնով և չստանդարտացված պայմաններով, որի դեպքում կողմերը ստանձնում են գործարքի վերջնահաշվարկի իրականացման պարտավորություն: Կախված ֆորվարդի (ֆորվարդ գործարքի) հիմքում ընկած ակտիվի տեսակից՝ ֆորվարդը (ֆորվարդ գործարքը) համարվում է արժութային ֆորվարդ, արժեթղթերով ֆորվարդ կամ այլ ակտիվներով ֆորվարդ:	Քանի որ ֆյուչերսն անմիջապես դրամական հոսքեր չի գեներացվում (ըստ պայմանագրի պայմանների՝ դրանք գեներացվում են ապագայում) հիմնական ռիսկը կապված է կոնտրագենտի անվճարունակության, սնանկության, ինչպես նաև ցանկացած այլ պատճառով պարտավորության չկատարման հետ:

3. Ծառայություններին առնչվող այլ ռիսկեր.

Ներդրումային գործունեությանը բնորոշ են նաև այլ ռիսկեր: Հաճախորդը պետք է հաշվի առնի հետևյալը.

1. Ցանկացած ներդրումային գործառնություն իր մեջ պարունակում է ռիսկի տարրեր:
2. Պոտենցիալ եկամտաբերությունը հակառակ համեմատական է ռիսկի աստիճանին: Հանդես գալով որպես եկամուտի ձեռքբերման միջոց՝ ռիսկը նաև հղի է հնարավոր կորուստներով:
3. Ներդրումային գործունեություն իրականացնելիս չափազանց կարևոր է ուսումնասիրել ստանձնվող ռիսկի քանակական և որակական հատկանիշները:
4. Առավել անվտանգ են ֆիքսված եկամուտ (fixed income) ապահովող գործիքները՝ բանկային ավանդները, պարտատոմսերը, լրիվ ապահովմամբ գործիքները և այլ գործիքներ, որոնք սահմանված ժամկետներում ապահովում են նախապես հայտնի՝ ֆիքսված եկամտաբերություն: Այնուամենայնիվ, նույնիսկ սույն կետում նշված գործիքները զերծ չեն ռիսկերից. պարզապես դրանք ավելի քիչ են (հետևաբար, նաև ցածր է այս գործիքների եկամտաբերությունը):
5. Նախորդ կետում նշված գործիքներից առավել ռիսկային են բաժնետոմսերը և մասնակի/պայմանական ապահովմամբ այլ գործիքները: Ֆիքսված եկամտաբերության բացակայության պատճառով ռիսկի աստիճանն աճում է (համապատասխանաբար ավելանում է նաև եկամտաբերությունը): Աճում է նաև ներդրողի գործողությունների նշանակությունը. ի տարբերություն պարտատոմսերի՝ բաժնետոմսերից բխող եկամուտները/կորուստները մեծապես կախված են ներդրողի՝ դրանք գնելու/վաճառելու ճիշտ և ժամանակին կայացված որոշումներից:

Հավելված 6

ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ

Ընկերության և նրա աշխատակիցների գործողությունների/անգործության վերաբերյալ բողոքները կարող են ներկայացվել Ընկերությանը աշխատանքային ժամերին:

Հաճախորդների կողմից ներկայացված բողոքների քննարկումը, ինչպես նաև հնարավոր վեճերի լուծման գործընթացը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև «Հաճախորդների բողոք-պահանջների քննության» ընթացակարգի դրույթների համաձայն: Հաճախորդի ցանկության դեպքում նշված ընթացակարգը կարող է տրամադրվել վերջինիս:

Հաճախորդը հնարավորություն ունի Ընկերության և հաճախորդի միջև կնքվող գործարքներից բխող բողոքները ներկայացնելու Ֆինանսական համակարգի հաշտարարինքե ընկերությանը բողոք ներկայացնելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդին գրավոր պատասխան չի տրամադրվել կամ եթե Հաճախորդին չի բավարարում Ընկերության գրավոր պատասխանը:

Յուրաքանչյուր անձ ունի դատական պաշտպանության իրավունք:

Ցանկացած անձ իրավունք ունի ստանալ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկությունները: Տեղեկությունները տրամադրվում են 3 աշխատանքային օրվա ընթացքում, որի համար չի գանձվում միջնորդավճար, եթե տեղեկությունները տրամադրվում են առձեռն կամ էլեկտրոնային փոստով, իսկ ֆաքսով կամ փոստով առաքելու դեպքում կարող են գանձվել տրամադրման հետ կապված՝ Ընկերության կրած ծախսերը:

Հավելված 7.1

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ ԴԻՄՈՒՄԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ/ՄԵՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի _____, տեղեկացնում ենք, որ «ԼԵՆԴՄԱՐԿ
ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի՝ ^{Հաճախորդի անունը/անվանումը} Ներդրումային ծառայությունների մատուցման
պայմանագրին միանալու Ձեր _____ ներկայացրած դիմումը
բավարարվել/մերժվել է:

_____ դասակարգվել է որպես _____:
^{Հաճախորդի անունը/անվանումը} ^{լրացվում է դիմումի բավարարման դեպքում}

Ձեզ շնորհվել է _____ կողմ:

Ձեզ համար բացվել են հետևյալ հաշիվները.

Հաշվի տեսակ	Հաշվի համար
Սեփական Ներդրումային հաշիվ	
Հաճախորդների Ներդրումային հաշիվ	
Ընդհանրական	
Առանձնացված	

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ գործադիր տնօրեն

անուն, ազգանուն, Ստորագրություն

Ամսաթիվ _____

Հավելված 7.2

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ ՆՈՐ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԴԻՍՈՒՄԻ
ԲԱՎԱՐԱՐՄԱՆ/ՄԵՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի _____, տեղեկացնում ենք, որ «ԼԵՆԴՄԱՐԿ
Հաճախորդի անունը/անվանումը
ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի՝ Նոր հաշվի բացման համար Ձեր կողմից _____
ներկայացված դիմումը բավարարվել/մերժվել է:

Ձեզ համար բացվել են հետևյալ հաշիվները.

Հաշվի տեսակ	Հաշվի համար
Սեփական Ներդրումային հաշիվ	
Հաճախորդների Ներդրումային հաշիվ	
Ընդհանրական	
Առանձնացված	

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ գործադիր տնօրեն

անուն, ազգանուն, Ստորագրություն

Ամսաթիվ _____

Հավելված 7.3

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ (ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐԿԵԼՈՒ/ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ) ՄԱՍԻՆ

Հարգելի _____, տեղեկացնում ենք, որ «ԼԵՆԴՄԱՐԿ
Հաճախորդի անունը/անվանումը
ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի՝ Պայմանագրի փոփոխման (ծառայություններից
հրաժարվելու/ծառայություններ ավելացնելու) մասին Ձեր
_____ ներկայացրած դիմումը բավարարվել/մերժվել է:

Դուք իրավունք ունեք օգտվել Դիմումի շրջանակներում նշված ծառայությունների
ծավալից սույն փաստաթղթում նշված ամսաթվից:

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ գործադիր տնօրեն

անուն, ազգանուն, Ստորագրություն

Ամսաթիվ _____

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՇԻՎ(ՆԵՐ)Ի ԲԱՑՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ/ՄԵՐԺՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ
Փաթեթի կառավարման համար

Հարգելի՛ _____ , տեղեկացնում ենք, որ
Հաճախորդի անուն, ազգանուն/անվանում

Ձեր ___.__.____թ. դիմումը «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ում լրացուցիչ հաշիվներ բացելու
վերաբերյալ ընդունվել/մերժվել է:

Ձեզ համար բացվել են հետևյալ հաշիվ(ներ)ը՝

Հաշվի տեսակ	Հաշվի համար
Ներդրումային հաշիվ Փաթեթի կառավարման համար	

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն _____

Ստորագրություն

Ամսաթիվ _____

Հավելված 8

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ (ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ/ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ) ԴԻՄՈՒՄ

ամսաթիվ _____

Սույն դիմումով _____ ցանկանում է
 հաճախորդի անունը և ազգանունը/անվանումը

փոփոխել _____ թվականի Դիմումով սահմանված և Ընկերության կողմից հաստատված՝ ծառայությունների ծավալը:

Հաճախորդի վերաբերյալ տվյալներ.

Անուն, ազգանուն/անվանում	
Հաճախորդի կոդը	

Հաճախորդը ցանկանում է Պայմանագրով և Կանոններով սահմանված կարգով օգտվել «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ հետևյալ ներդրումային և/կամ ոչ հիմնական ծառայություններից.

բրոքերային ծառայություններ, ներառյալ՝

- արժեթղթերով գործառնությունների իրականացում,
- արտարժույթի առքի և վաճառքի գործառնությունների իրականացում,
- լեվերիջով, այդ թվում՝ ֆորեքս գործարքների իրականացում,²

ներդրումային խորհրդատվություն,

արժեթղթերի փաթեթի կառավարում,

արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխում,

արժեթղթերի պահառություն,

փոխառության տրամադրում արժեթղթերով գործարքների իրականացման համար,

արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում,

խորհրդատվություն ընկերությունների կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության, ընկերությունների վերակազմակերպման հարցերի վերաբերյալ:

Հաճախորդը հաստատում է, որ ծանոթացել է «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագրին (պայմաններին), ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման կանոններին (ներառյալ՝

² Լեվերիջի առավելագույն մեծությունը, դրա փոփոխության պայմանները, ծառայության կամ գործարքի արդյունքում կորուստների ռիսկերը և փոխհատուցման մեխանիզմների վերաբերյալ տեղեկությունները, մարժայի և այլ միջոցների փոխանցման կարգը և գործարքին բնորոշ այլ առանձնահատուկ պայմանները սահմանվում են Ընկերության և Հաճախորդի միջև առանձին ստորագրվող փաստաթղթում:

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի, նրա ծառայությունների և արժեթղթերի մասին տեղեկատվությանը) և ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման սակագներին (ներառյալ՝ ծախսերին և միջնորդավճարներին):

■ Հաճախորդը համաձայն է պրոֆեսիոնալ հաճախորդի չափանիշներին բավարարելու դեպքում դասակարգվել որպես պրոֆեսիոնալ հաճախորդ և տեղյակ է, որ որպես պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգվելու դեպքում հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործելու իր նկատմամբ, և այդ պատճառով Հաճախորդը կորցնում է որոշակի պաշտպանվածություն:

■ Հաճախորդը համաձայն է որպես պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգվելու դեպքում նաև գրանցվել Որակավորված ներդրողների գրանցամատյանում:³

■ Հաճախորդը տեղյակ է, որ լեվերիջով գործարքները, այդ թվում՝ ֆորեքս գործարքներն ունեն բարձր ռիսկայնություն, և այդ գործարքների կնքումը համապատասխանում է միայն այն պրոֆեսիոնալ հաճախորդներին, որոնք պատրաստ են կորցնել իրենց կողմից նախապես ներդրված ապահովվածության գումարը (մարժան), և գիտակցում է, որ այս գործարքներին բնորոշ են զգալի գնային տատանումներ, որոնց արդյունքում կարող է ինչպես բարձր եկամուտներ ստանալ, այնպես էլ զգալի կորուստներ կրել:

լիազոր անձի անուն, ազգանուն, պաշտոն

ստորագրություն

³ Որակավորված ներդրողների գրանցամատյանը վարվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Գրանցամատյանում գրանցվելու նպատակով Հաճախորդը պետք է ներկայացնի ՀՀ ԿԲ Կանոնակարգ 4/06-ի Հավելված 1-ով սահմանված՝ որակավորված ներդրող գրանցվելու դիմումը:

Հավելված 9

**ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՄԱՍԻՆ
LMC-MAA-ddmmyy-XXX**

ք. Երևան

_____թ.

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերությունը (ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա N 16, ՀՎՀՀ՝ 02695279, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10, տարածք 118) (այսուհետ՝ «Ընկերություն»), ի դեմս գործադիր տնօրեն (_____), ով գործում է կանոնադրության հիման վրա, և _____ (գրանցման/անձը հաստատող փաստաթղթի համար՝ _____, ՀՎՀՀ/ՀԾՀ՝ _____, հասցե՝ _____) (այսուհետ՝ «Հաճախորդ»), մյուս կողմից, միասին անվանվելով «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ», ղեկավարվելով համաձայնեցին հետևյալի մասին.

1. Համաձայնության առարկան

- 1.1. Կողմերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով, Ընկերության Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման կանոններով (այսուհետ՝ «Կանոններ») սահմանված կարգով կնքում են ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների (այսուհետ՝ «Ծառայություններ») մատուցման պայմանագիր (այսուհետ՝ «Պայմանագիր»):
- 1.2. Պայմանագիրը կնքվում է Ընկերության Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագրի (Պայմանների) պայմաններով:
- 1.3. Ծառայությունների շրջանակը սահմանված է Հաճախորդի կողմից ներկայացված և Ընկերության կողմից բավարարված՝ «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ ներդրումային եվ ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագրին միանալու դիմումում (այսուհետ՝ «Դիմում»)՝ դրա բոլոր փոփոխություններով հանդերձ, որը կցվում է սույն փաստաթղթին որպես անբաժանելի հավելված:

2. Կողմերի իրավունքները, պարտավորությունները և պատասխանատվությունը

- 2.1. Կողմերի իրավունքները, պարտավորությունները և պատասխանատվությունը սահմանված են Կանոններով և Պայմաններով:
- 2.2. Ի հավելումն Կանոններով և Պայմաններով սահմանված իրավունքների, պարտավորությունների և պատասխանատվության՝ Կողմերն ունեն նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ,

ինչպես նաև կրում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

3. Վարձատրությունը

3.1. Ծառայությունների համար վարձատրությունը սահմանվում է Ընկերության Սակագներով, իսկ հաշվարկման և վճարման կարգը՝ Պայմաններով:

4. Անցումային դրույթ

4.1. Սույն փաստաթուղթը կազմված է հայերեն լեզվով՝ 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:

4.2. Սույն փաստաթղթին կից երկկողմանի ստորագրված հավելվածում ներկայացված են Ընկերության և Հաճախորդի Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցները և իրավասու անձանց տվյալները: Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցները և իրավասու անձանց փոփոխության դեպքում կողմերը ստորագրում են նոր հավելված:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ

Վ. Սարգսյան 10, 118 տարածք, ք. Երևան, 0010, ՀՀ

ՀՎՀՀ: 02695279

Գործադիր տնօրեն

ՀԱՃԱԽՈՐԴ

Հավելված 10

Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ

Ընկերություն		Հաճախորդ	

Իրավասու անձանց տվյալներ

Ընկերություն		Հաճախորդ	
Իրավասու անձ	Գործողություններ	Իրավասու անձ	Գործողություններ

Ստորագրելու իրավասություն ունեցող անձանց տվյալներ

Ընկերություն		Հաճախորդ	
Իրավասու անձ	Փաստաթղթերի տեսակներ	Իրավասու անձ	Փաստաթղթերի տեսակներ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ

Վ. Սարգսյան 10, 118 տարածք, ք. Երևան, 0010, ՀՀ

ՀՎՀՀ: 02695279

Գործադիր տնօրեն

ՀԱՃԱԽՈՐԴ